

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>


E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>





ՀԱՄԱԿԵՐ  
ՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՅԱԼՈՒԹԻՒՆ



Պետրոսյան Վ. Հ.

Պ 505 Զորք վիպակ: Վիպակներ: [Դպր. միջին և տարիքի համար]/Վարդես Պետրոսյան, Յարալյան].—Եր.: Արևիկ, 1990, 392 էջ:

Ժաղափածուն բովանդակում է Վարդես Պետրոսյանի լազգագիրը, անամակներ մանկության կայլ «Դեղատուն» և «Վերշին ուսուցիչը» վիպակները:

Գ 4808050201 (60) 70—00  
Պ 707 (01) 90

ISBN 5—8077—0218—2

Գ.Մ.Դ

© Վարդես Պետր

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա ժողովածով մեջ ամփոփված վիպակները (որ գըրված են 1967—1978 թվականներին), իրար մոտիկ են ասելինով, նաև գրողական հայացքի ուղղությամբ և, այդ տրամաբանությամբ էլ, կառող էին հավաքվել մի գրքի «կտորի տակ»: Բոլոր վիպակների ասելիքը, կենսական նյութը տվյալ ժամանակի պատճենեկությունն է, երիտասարդությունը, որ փորձում է, հանախ՝ տանշապիռեն, սեփական պատասխանները գտնել անհուսալիորեն հին, բայց և ամեն ժամանակի հետ նորից-նոր ծնվաղ հարցին. ինչի՞ համար է մարդ ապրում... Գրողական հայացքի ուղղությունը չորս վիպակներում էլ նոյնն է— հասկանալ, առնվազն ճիզ անել հասկանալու նոր, հաճախ անսովոր սերներին, լուել հրա ոչ միայն խոսքը, այլև լուրջունը, սեփական փորձի տրամաբանությամբ չմերժել հրա կասկածները, մանավանդ՝ տաղտկալի բարոյական շդառնալ:

Երիք հարկ չկա հիշեցնելու, որ 1967—1978 թվականները թանգ էլ ամենաբարենպատ ժամանակները չէին կյանքի զուտ ճշմարտությունը մարմնավորելու համար և, այնուանմանիվ, երբ վերաբերաբարության նպատակով ես մերժեցնեցում էի այս վիպակները, չուղեցի բառացիորեն որևէ փոփոխություն կամ խմբագրում անել, թեսես... Թեսես այսօր արդեն կարելի էր բացել շատ վակագծեր, կարելի էր դուրս գալ ենթատերսատի գերությունից, գոնեւ տեղ-տեղ վերծանել եղովայսան լեզուն: Ապրածը-ապրած է, գրվածը-գրված: Եվ դրա համար՝ ընթերցողից ես ներողամտություն չեմ, որ կուգենայի ակնկալել:

Երկու բան կուգենայի:


Սոսաշին: Այս վիպակների երիտասարդ ներուսների հասկակիցները, որոնք այսօր երեսուն-քառասուն տարեկան են,

այս վիպակները կարդալով, գոնե մի պահ վերապրեին իրենց պատասխելությունն ու ջանելությունը, վերադառնային արդեն հուշ դարձած իրականության, ապրած հույսերի ու կասկածների այն մթնոլորտը, որ, անկախ ամեն ինչից, սիրելի է ու նվիրական:

Եվ երկրորդ: Կուզենայի, որ նրանք, այն ընթերցողները, որ այսօր են հասնոյթ-քան տարեկան, այս վիպակների մեջ կարողանային տեսնել վարչուն-յոթանասնական թվականների իրենց հասակակիցներին, որ և՛ նման, և՛ տարբեր են իրենցից: Եվ փորձեին հասկանալ նրանց: Նրանց ուրախությունը, երանց տառապանքը:

Եթե այդպես լինի, իբրև գրող ես ինձ մեծապես վարձատրված պիտի զգամ, որովհետև խորի ազատության ամենակաշիւնդված ժամանակներում անգամ գրողը մի իրավունք հաստատ ունեցել է՝ չասելու, չգրելու այն, ինչ չի մտածում: Այս վիպակներում շատ բան կա իմ սեփական կենսագրությունից, իմ սերնդի ապրած կյանքից, բայց, բնականաբար, ամելի շատ՝ այդ ժամանակների երիտասարդության կենսագրությունից: Իմ հերոսներից շատերը իրական հայատիպեր են ունեցել, այուժետային շատ գծեր ես քաղել եմ կյանքից:

Ինչպե՞ս, ի՞նչ չափով է ինձ հաջողվել՝ կյանքի ճշմարտությունը մարմարվորել իբրև արվեստի ճշմարտություն (կերպարներ, ոճ, լեզու և այլն), այստեղ միակ դատավորը ընթերցողն է, որին ես, ինչպես միշտ, հավատում եմ:



ՀԱՄԱԿԵՐ  
ՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՅԱԼՈՒԹԻՒՆ

ո...Ես որտեղից եմ զայխս... Իմ մանկությունից  
ես զայխս եմ մանկությունից՝ ինչպես որևէ երկրից  
են զայխս:

ԱՆՏՈՒԱՆ ԳՅ ՍԵՆՏ ԷԳՐՅՈՒԹԵՐԻ

ՓՈՔՐԻԿ ՄԻ ՀԵԶԻՑԹ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ՆԱԵՎ ԱՅՍ  
ՎԻՊԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ ԴԱՌՆԱԼ

— Իմ անցյալ տարին հիմա որտե՞ղ է, — Հարցրեց մի օր  
որդիս, — արի գնանք իմ անցյալ տարվա մոտ:

Որդիս քիչ առաջ կոտրել էր մոր ամենասիրած Հայելինե-  
րից մեկը (մայրը ամենասիրած շորս Հայելի ունի, բայց սա  
ի միջի ալլոց), իսկ ես երկար, փափուկ ու ձանձրալի բացատրել  
էի, թե նա հիմա մեծ տղա է, այ եթե Հայելին նա անցյալ տարի  
կոտրած լիներ, ոչինչ, քանի որ անցյալ տարի նա փոքրիկ էր,  
չէր հասկանում, թե ինչ է անում...

Իմ այդ խոսքերի վրա որդիս իր սկ, վիթխարի աշքերը  
ավելի մեծացրած՝ մտածեց-մտածեց, հետո տվեց իր զարմա-  
նալի հարցը. «Իմ անցյալ տարին հիմա որտե՞ղ է...»:

...Եվ ես ստիպված հորինեցի այս Հերփաթը՝ մարդու ապ-  
րած-վերջացրած տարիների մասին. «Ուրեմն, մարդու կյանքը  
նման է գնացքի, ինչպես մանկական երկաթուղու գույնզգույն  
գնացքները: Գնացքի ճանապարհո՞ր սար է, ինչպես Արարատ  
սարը, առաջին քառասուն տարում գնացքը բարձրանում է,  
մյուս քառասուն տարում իջնում: Մարդու առաջին տարվա  
գնացքը մի վագոն է: Մարդը, ուրեմն, աշխարհ է դուրս դա-  
լիս մի վագոնով: Երբ լրանում է նրա մի տարին, և նա մըտ-  
նում է երկուսի մեջ, ճանապարհին նա թաղնում է այդ առա-  
ջին տարվա վագոնը, նստում ուրիշ մի վագոն, որ մի քիչ ավե-  
լի մեծ է: Այդպես կամաց-կամաց մարդու կյանքի գնացքը  
բարձրանում է սարն ի վեր՝ ճանապարհի ծաղիկների ու փշերի  
մեջ թողնելով իր տարիները: Ամեն կայարանում՝ մեկը»:

— Ես քանի՞ տարեկան եմ, — հարցրեց որդիս:  
— Չորս, — ասացի, — փետրվարին կինես շորս:  
— Իմ անցյալ տարվա գնացքն եմ ուզում: Հիմա որտե՞ղ է:  
— Հեռու, շատ հեռու տեղ է, — ասացի, հետո մտածեցի, որ  
այս հերթամբ շատ ավելի ինձ համար էր, որ շատ ավելի ե՛ս  
կուղինայի ետ վերադառնալ իմ մանկության կայարանները,  
որտեղ ես մեկիկ-մեկիկ թողել եմ իմ տարիները: Հիմա իմ  
կյանքի գնացքը իշխում է զառիվայրով, ես ետ եմ նայում  
ինքս իմ մեջ իսկ իմ մեջ մանուշակագույն մշուշ է, շատ բան  
կորել է, մոռացվել, պետք է հորինես:

Այսպես ծնվեցին ու գրվեցին այս պատմվածքները, որ  
նամակներ են մանկության կայարաններից: Այդ նամակները  
ես գրել եմ ինքս ինձ: Որդիս, որ հիմա շորս տարեկան է, ուռ-  
ցի կարդա մի օր կամ, որ ավելի հավանական է, երես շկար-  
դա, նրա մանկության գնացքն ուրիշ է, ճանապարհի ծաղկե-ներն ու վշերն ուրիշ են, ուրիշ են կայարանները...

Ասում են, թե ապրած տարիների խարույկից մարդ պետք է  
կրակները վերցնի, այլ ոչ թե մոխիրը... Տարիների մոխիրների  
տակից ես փորձեցի արթնացնել իմ մանկության կրակները:  
Զգիտեմ, կարողացա՞...

## Ա.ՔՈՐԱՔՅՈՐ

«Խաչատուր Աբովյանը, որ հայ մեծ լուսավորիլ է, մեր  
գյուղ այն ժամանակ էր եկել, երբ Պերճ Պոռշյանը ձեր տա-  
րիքին էր: Աբովյանն այցելել է այն դպրոցը, որտեղ սովո-  
րում էր ապագա գրողը: Այդ դպրոցը Մարինե եկեղեցու բա-  
կում էր, գետափից չի երեսում: Հետո մեծ լուսավորիչը երեխա-  
ների հետ եկել է Քասախի ափը, ահա այստեղ: Նրան շատ  
է գուր եկել մեր Աբովյանը: Իսկական արձան է, ասել է:  
Ինքն է ասել: Ահա, այս է Աբովյանը»:

Այս բառերը հիմա մոտավորապես եմ հիշում, որովհետև  
լսել եմ, երբ ութ տարեկան էի: Ասողը մեր առաջին ուսուցիչն  
էր՝ տիկին Շուշանիկը, իսկ մենք, սկսնակ հորթերի պես, գե-  
տակի ավագներին կանգնած՝ այրող նախանձով նայում էինք  
զրի մեջ լցված, տաք քարերին պառկած մեր գյուղի մեծ-մեծ  
տղաներին: «Այ, հիշեցեք, երեխաներ, — այս բառերի նման

բառերով է երեխ շարունակել տիկին Շուշանիկը, — այս ավա-  
զը, ոքի վրա հիմա գուք կանգնած եք, շկարծեք, հասարակ,  
սովորական ավազ է: Հարյուր տարի առաջ, երբ մեծ լուսավո-  
րիչը լողացել է մեր գետում, հետո, որ շմբսի, պառկել է հենց  
այս ավազին...»:

Ավազը այրում էր մեր ոտքերը, մանավանդ նրանցը, որ  
բորիկ էին, մենք չգիտեինք, թե ով է այդ խաչատուր Աբով-  
յանը կամ Պերճ Պոռշյանը, իսկ Աբովյանը մի մեծ ժայռ  
է, որ հիմա էլ Քասախի գետի ափին է, նրա գլխից հիմա էլ տղա-  
ները իրենց ցցում են զրի մեջ, և ներքեւ լնինելու պահին ան-  
պայման ծղրառում են, ինչպիս այն ժամանակի:

Տարիներ հետո ես իմացա, որ տիկին Շուշանիկը իր ամեն  
տարվա առաջին դասարանցիներին բերում է Աբովյանը մոտ-  
ե, ուրեմն, ամեն տարի անում է նույն պատմությունը, որ  
այս ավազը սովորական ավազ չէ, որ Աբովյանը տակ լո-  
ղացել է խաչատուր Աբովյանը: Ճիշտ է, լողացել է հարյուր  
հիսուն տարի առաջ և նրա լողացած զուրը ով գիտե որ օվկիանո-  
սըն է հասել կամ գոլորշիցել է լրիվ, բայց մեկ է՝ հիմա,  
այս պահին հոսող զուրն էլ սովորական զուր չէ, որովհետև այդ  
գետի շատ նախսին զրում լողացել է խաչատուր Աբովյանը:

Աբովյանը վերևում, ձորի պոնկին տներ են՝ աշխարհին  
նայող պատուհաններով ու պատշամբներով, երեսում է նաև  
երկու ավերակ եկեղեցի: Հետո, տարիներ հետո՝ ես կիմա-  
նամ, որ նրանցից մեկը կոչվում է Սիրանավոր, մյուսը՝ Սպի-  
տակավոր, իսկ Կարմրավորը ձորից քիչ հեռու է, բարձունքի  
վրա: Հետո տատիցս կմսեմ երեք զեղեցիկ քույրերի պատմու-  
թյունը, որ իրենց մահվան օրը, նրանք երեքն էլ նույն օրը մե-  
ռան, ուրեմն իրենց մահվան օրը՝ քույրերից մեկը ծիրանա-  
գույն էր հագել, մյուսը սպիտակ, երրորդը՝ կարմիր: Հետո,  
տարիներ հետո ես կքրքրեմ մեր հին ու նոր վկայությունները և  
այդ պատմությունը ոչ մի տեղ չեմ գտնի...

Այդ հետո իսկ հիմա, այսինքն, երեսունհինգ տարի առաջ՝  
հիմա, սեպտեմբերի առաջին կիրակի օրը՝ մենք մեր առաջին  
ուսուցչունու հետ կանգնած ենք Քասախի գետի ափին, և մեր  
ուսուցչին այրում են Աբովյանը ավազների մեջ:

— Տիկին Շուշանիկ, իսկ ո՞ւր է աբովյան, — տարիների մու-  
ժից լսում եմ սեփական ձայնս, — քարի վրա ոչ մի աբովյ էլ  
շկա:

Աքլորաքարի գլխին այդ պահին կանգնած էր մի երկար, շատ երկար տղա, աքլորը իսկասկա չկար:

— Տիկին Շուշանիկ, — լուսմ եմ ուրիշ ձայն, — Պերճ Պռշշանի՞ն էլ եք դուք դաս տվել...

— Տիկին Շուշանիկ, իսկ զուք կթոշե՞ք Աքլորաքարից, չե՞ք գախենա...

— Տիկին Շուշանիկ, իսկ Խաչատուր Աքլովյանը մեր գյուղացի՞ն...

Այս խոսքերի վրա տիկին Շուշանիկը հավանորեն մեղմ ծիծաղել է և մեզ, սապերի երամի պես առաջն արած, քշել է Հին կամքի վրայով: Կամքի մեջտեղում նա նորից խմբել է մեզ, ձեռք մեկնել դեպի Աքլորաքար և ասել մոտավորապես այսպիսի բառեր. «Ուր էլ զնաք, ինչ երկրներ էլ տեսնեք, ինչ մարդ էլ դառնաք, հիշեցեք, որ ձեր գյուղում Աքլորաքար կա, որի տակ լողացել են Խաչատուր Աքլովյանն ու Պերճ Պռշշանը»:

Տասու ապագայում հշամատափ, որ Աքլովյանը խեղդվել է մեր Քասախ գետում, հենց Աքլորաքարի տակ, որտեղ առաջ շատ խորն է եղել, իսկ երեք քույրերի պատմությունը ահա թի որն է... Հին ժամանակ, ոչ ոք չի հիշում՝ երբ, մեր գյուղում երեք գեղեցկունի քույրեր են ապրելիս լինում: Իրարից անտեղյակներաք Աքլորաքարի մոտ տեսնում են մեր գյուղացի մի երիտասարդ տղայի՝ Սարգսին, ու, իրարից անտեղյակ, սիրահարվում: Մի օր էլ, քույրերից երկուսը սրտները բացում են իրար առաջ: Փոքր քույրը տանը չի լինում: Իրար սրտի գաղտնիքն իմանալով, քույրերը լաց են լինում, հետո նրանցից մեկը ծիրանագոյն է հագնում, մեկը՝ սպիտակ և զնում են դեպի ձորը: Զորագլխի տարրեր ժայռերից նրանք նայում են ներքե, որովհետև Սարգսին այնտեղ էր, Աքլորաքարի զլիսին: Հետո քույրերը նետվում են ցած, ջախջախվում ժայռերի մեջ: Նույն բոպեին: Ամեն մեկը առանձին մտածում է, որ ինքը կմենանի ու քույրը կհանի իր երազին: Վերջին անգամ նրանք երեխ իրար տեսնում են օդի մեջ, բայց արդեն շատ ուշ էր: Երրորդ քույրը, որ նույնպես սիրում էր Սարգսին, լուրն իմանում է ձորի ճանապարհին, նա կարմիր էր հագել այդ օրը, և այդ կարմիրի մեջ էլ մարում է նրա սիրուը:

Այդպես, նույն օրը մենոնում են երեք քույրերը, և մի գիշերում հրաշքով ծնվում-կառուցվում են Միրանավորը, Սպիտակավորը, Կարմրավորը: Սարգսիը աստծո կամքով իմանում է

այս ամենը և երդվում այլու չնայել ոչ մի աղջկա երեսին: Քասախի հին կամքիցից վերե, բարձր ժայռի վրա, նա փոքրիկ մի տնակ է շինում և մեն-մենակ ապրում իր կյանքի բոլոր մնացած տարիները: Այդտեղ էլ մի օր վրա է հասնում մահը, և նրան թաղում են ժայռի մեջ, իսկ տնակը դրանից հետո դառնում է սրբատեղ:

Երբ տաստ առաջին անգամ արեց այս պատմությունը, ես բավական հիմար էի, փաստաբանությունս բռնեց, և ասացի, թի Միրանավորը, էսպես ու էսպես՝ կառուցվել է հինգերորդ գարում, Կարմրավորը՝ յոթերորդ, իսկ Սպիտակավորը՝ տասներեքերորդ դարում: Ինչ վերաբերում է սուրբ Սարգսին՝ այդ տունը երեկ-մյուս օրն են սարքել, երկի ինչ-որ մի հովիվ է ապրել, հետո թողել զնացել է, մեկնումեկը մոմ է վառել ու այդպես տնակը դարձել է աղոթավայր: Երբ տաստ լսեց իմ փաստաբանությունը, խեղճ-խեղճ նայեց ինձ, հետո զղայնացած արաց, որ այդ պատմությունը ինքը լսել է առաջին համաշխարհային պատերազմից շատ առաջ, իր հարազատ քեռուց, որը փարիզներում և վենետիկներում էր կրթություն ստացել, այլ ոչ թե ինձ նման զոռով զասարանից դասարան փոխադրվել, այն էլ Աշտարակի պես զյուղ տեղ: (Ի՞արկե, ճիշտը տատս էր, և այդ հասկացած բավական ուշացումով, բայց լավ էր, որ նա դեռ ապրում էր, և ես մի օր ասացի, թե այս պատմությունը հաստատ կարդացել եմ ֆրանսերին տպված մի գրքում: Տաստ շատ ուրախացավ և ժամաց ներողամիտ: «Որ ասո՞ւմ էիս...»):

Աքլորաքարը... Դպրոցական ամենավերջին քննությունից հետո, ուշ գիշերով մենք հավաքվեցինք Աքլորաքարի զլիսին, ձորից չորացած փայտ հավաքեցինք, խարույկ արինք և, թըղթերի վրա գրելով մեր սիրած աղջիկների անունները, այրեցինք: Աղջիկները, իրենց հերթին, դրեցին իրենց սիրած տղաների անունները և... այրեցին: Թղթերը նախ բռց դառնան, հետո մոխիր, որ քամին քշեց-տարավ, խառնեց Քասախի զրերին, լավ էր, որովհետև կարող էր պատահել, որ մենք երկու-երեք ընկերով նույն աղջկան էինք սիրում, որովհետև կարող էր պատահել՝ երկու-երեք աղջիկներով սիրում էին մեկնումեկին: Մաքուր, աղջիկ ու քնքուշ, հեթանոսական ինչ-որ բան կար այդ պարագության մեջ, և հիմա ես հասկանում եմ, որ մեր զիխավերում, մեր փիրուն հոգիների մեջ բոլոր այդ տարիներին ապրել էին Միրանավորը, Սպիտակավորը, Կարմրավորը: Հետո

Նույն անունները մենք նորից գրեցինք, առանց կարդալու լցրեցինք զինու շշի մեջ, ամուր փակցինք շշի բերանը, թաղեցինք Աքլորաքարի տակ, հանդիսավոր երդում տալով, որ կհանենք միայն բանհինք տարի հետո և կարդանք:

Զհանկցինք:

Զկարդացինք:

Որովհետեւ այլևս երեք չհավաքվեցինք լրիվ դասարանով:

Հիմա մենք, կենդանի մնացածներս, երեխ առանձին-առանձին ենք գնում մեր մանկության հիշատակների հետքերով և գուցի մի օր էլ այդպես պատահաբար հանդիպենք Աքլորաքարի տակ, երբ արեսու կիրակի կլինի, մենք կարոտած կլինենք մեր մանկության ձայներին ու առանձին-առանձին եկած կլինենք Քասախսի ծորը:

Մեծ աղջկու, երբ կարդաց մինչև այստեղ գրածս, ներողամիտ ասաց. «Հայրիկ, դու ահազին սենտիմենտալ ես»:

Ես ասացի, որ սա պատմվածք է և ոչ թե իմ կյանքի պատմությունը, իսկ նա ասաց. «...Քո սերնդի մանկության մեջ ուրախ օր շի՞ եղել...»:

Եղել է:

Եվ այդ օրերից ամենաուրախն այն օրն էր երեխ, երբ մենք, Աքլորաքարի զլիսին, խարույկ արած, այրում էինք մեր սիրած աղջկների անունները, և մեր դասարանի աղջիկներն այրում էին իրենց սիրած տղաների անունները...

Իսկապես, ահազին սենտիմենտալ է իմ սերունդը:

## SUSU

Վերջին անգամ, երբ գնացել էի մեր զյուղ տատիս տեսնելու, նա ինձ շճանաշէց: Երկար, մանրամասն շոշափեց դեմքս, ձեռքերս, բայց ոչինչ շասաց: Վաղուց նրա աշքերը լավ չէին տեսնում, գուցեն արգեն մինել էին անդառնալիորեն, բայց տեսնելը տատիս համար քիչ նշանակություն ուներ, մարդկանց նա զգում էր: Այս անգամ տատս ինձ շղգաց, ես մի բանի անգամ նույնիսկ կրկնեցի անունս, իսկ նա անկապ-կցկտուր բաներ էր միայն ասում: Այդ անկապ, կցկտուր բառերի մեջ ես որսացի մեծ եղբարս անունը, որ վաղուց չկա, նաև տատիս փոքր եղբոր անունը, որ թաղված է Հաբեշստանում, թէ՝

Թունիսում՝ շգիտեմ: Հետո տատս սմբկց-ծվարեց սպիտակ բարձին, ծածկվեց իր հին, զոլ-զոլ վերմակով, որի տակ ես էլ շատ եմ կուշուրեկ պատերազմի ցուրս գիշերներին: Եղբորս հետ զուրս եկանք պատշգամբ: «Լևոնին հեռագրե՞նք, թէ՞ կարիք չկա: Երեկի շհամնի էլ»: Լևոնը քեռուս փոքր տղան է, որ ծառայում է բանակում, կարծիմ Սիրիոսմ՝ Զիտայի մարզում: «Չէ, ինչ կարիք կա», համաձայն եղբայրս, ու մենք ծխեցինք զյուղական գիշերվա մուգ լուսիլան մեջ: Պատշգամբի դիմաց տատիս իսկական տունն էր. այստեղ նա ապրել էր իր բոլոր տարիները, քանի պատերազմից չէր վերադարձել նրա միակ որդին և չէր շինել այս տունը, որի պատշգամբին էինք մենք հիմա: Տատիս հին տունը հանկարծ շատ նման թվաց վերմակ տակ ծվարած տատիս, և ես տիրեցի...

Իսկ մի քանի օր անց...

Դա եղել էր լուսադիմին, եղել էր՝ ինչպես մուն է վառվում-վերշանում լրված եկեղեցու խորանին: Տատս զիշերը բնել էր ու... քնել: Հարյուր տարվա անքություն ուներ տատս: Երբ ես քաղաքից զյուղ հասա, նա դեռ իր մահճակալին էր, միայն թե ծածկված սպիտակ, թարմ սավանով: Սավանի տակ ինձ թվաց ոչինչ չկա: Բայց տատս այնտեղ էր: Ես նստեցի մահճակալի մոտ զրված աթոռին, ինչպես այն օրը, իսկ տանը գործնական եռուղեռ էր. հարկավոր էր ազգուտակին իմաց տալ, աթոռներ, ամանեղեն, մթերք ճարել, հեռագրել Մոսկայի նրա եղբոր աղջիկներին, որ սրանք, իրենց հերթին, ցավակցական հեռագրի ուղարկեին գյուղ: Մի խոսքով: Օդի մեջ տիբրության, կորուստի ցավ չէր երկում, տատս հարյուր երեք, հարյուր շորս տարեկան էր, և ես հանկարծ հասկացա, որ սա արդեն տատիս տունը չէ: Երեխ այդ միտքն էր, որ ինձ դուրս հրեց տապ, աղմկոտ սենյակից: Ես իշա տատիս այդին, որ դեռ տատիս այգին էր, նստեցի հողին, որ անպայման սպանել է տատիս մատների հետքերը, ծխեցի: Աշխարհում ոչ ոք գեռ չի որոշել, թե մարդու կյանքի քանի՞ տարին է շատ և քանի՞ սը քիչ, ու դրա համար՝ ո՞վ ասաց, թե վաղուց ժամանակն էր, որ տատս զնար: «Մեռնելը պիտի փողով լիներ,— մի անգամ ասել էր ինձ տատս,— որ երբ սիրտդ ուղենա, մահդ առնեիր ու գնայիր»:

Իմ գրասեղանի մոտ, բարալիկ ճաղերով մահճակալին, թաթիկները վերև պահած քնել է կիլիթը: Նա իմ տատիս մեկ-

երկու շաբաթ հետո ծնվեց: Զեռքերը վերև է պահել, որ չկապին: (*Միամիշա, կարծում է այդքանն արդեն բավական է, որ չկապեն*): Ես փոքրին թուղացնում եմ կիլիթի կապերը, որ նա հանգստանա, իսկ մտքերս տատիս հետ են: Ամեն մարդ աշխարհից երկու պապ և երկու տատ ստանալու իրավունքով է ծնվում, իսկ ինձ բաժին էր ընկել ընդամենը մի տատ: Գույք ես նրան սիրում էի այդ շորսի<sup>9</sup> համար: Գույց նա ինձ սիրում էր այդ շորսի<sup>9</sup> փոխարեն:

Տատ...

Ուրեմն, ես այլևս թոռ չեմ: Մեծացա, միանգամից մեծացա: (*Ախր, երբ տատդ կա, ոու չես կարող այնքան էլ մեծ լինել: Ուրեմն, տատս զնաց... ճիշտն ասած՝ ես այնքան էլ չէի հավատում, թե կու մի օր, և տատս չի լինի: Իմ ապրած քառասուն տարիներին, իսկ ես նրան կարգին հիշում էի ութտար տարեկանից, ուրեմն, իմ ապրած երեսուն տարիներին տատս համարյա չէր փոխվէ, յոթանասունշինդ տարեկանից հետո ո՞վ է փոխվում... Միայն թե, տարիների հետ, նա սմբում էր, մարժինը կամաց-կամաց խտանում, կարծրանում, փոքրանում-փոքրանում, միսր համբարձվում էր, մնում էր ոսկորր: Պապերը, ինձ միշտ այլպես է թվացել, մնոնում են ջաճել ու հանկարծակի, նախորդ օրը նրանք գեռ զինի են խմում, աղբյուրի մոտ նստած, մեջքներն արևին, զրոյց անում, իսկ առավոտյան կողք-կողքի դրված քարերից մեկը մնում է դատարկ և ուրիշ ոչինչ: Պապերը, ուր էլ զնան, առանց զգուշացնելու են զնում՝ պատերազմ, պանդխտություն, հանգստարան... Տատերը հայրիվում են անտեսանելիորեն, քարե գուռը լցրած ջրի պես պակասում-պակասում՝ կաթիլ-կաթիլ, կաթիլ-կաթիլ... Մեր աշքերը չեն նկատում այդ կաթիթոցը ու երեխ դրա համար մենք չենք պահպանում տատերին, մեզ թվում է, թե նրանք միշտ լինելու են թիթենու պես, խաչքարի պես, առվի ափերը միացնող սալաքարի պես: Մեզ թվում է նրանք են, որ միշտ պիտի աղոթեն մեզ համար, իսկ մենք պարտք շունենք նրանց առաջ:*

Տատս ծանրություն չեղավ ոչ մեկիս համար՝ իր ապրած տարիներին, նաև այն ժամանակ, երբ մենք թոռներով բարձրացրինք նրան, որ տանենք իր առաջին օդացին ճանապարհով: Շատ էր թեթև, ու ինձ մի պահ թվաց, որ տատիս մոռացել են այնտեղ, հոգնած զսպանակներով իր մահճակալի զոլ-զոլ վերմակի տակ, և հիմա մենք տանում ենք միայն սև թավիշով

պատաժ նրա ամենավերջին տունը, որ շոր փայտից էր: Բայց տատս այնտեղ էր, շորուկ ծնկներին՝ ծաղկիներ, մի բուռ դեմքը շրջանակված մետաքսե զլիաշորով: Շատ էր թեթև տատս, իսկ ծառերից թափվում էին աշնան տերեները, տերեները տատ չեն դառնում, տերեները երեխա են մեռնում: Ու այդ երեխատերեների շրջունի տակ մենք մեր տատին՝ իբրև սև թավշին ընկած աշնան մի մեծ տերև՝ ծածկված թանկարժեք ծաղիկներով, որ շերմոցում են մեծացել:

Տատս նոր շորերով էր՝ սև սատինից, երեկ կարել էր մի լավ օրվա համար, բայց ես կուգինայի, որ ամենօրյա շորերով նրան ուղարկեին գեափի անհայտություն, որը, ինչո՞ւ անհայտություն, վերջին հաշվով ամենահայտնի բանն է՝ մեր ծննդյան թվականից հետո...

Աղջիկս քնի մեջ թնկթնկում է: Նա արդեն սկսել է ձայներ զանազանել, զգալ լույսը, երբեմն ժպտում է քնի մեջ, հնարավոր է նույնիսկ երազներ է տեսնում: Ես իմ զրասեղանի հեռվից նայում եմ նրա մաքուր, անարատ զնշիկին, որ ամփոփված է սպիտակ ժանյակավոր զլիարկով, իսկ մտքիս մեջ հանկարծ կաղմագործում է զարմանալի՝ անտրամաքանական մի նախադասություն: «Դալիս եմ, տատի՞կ...»: Տատի՞կ... Այն տատիկս ինձնից մեծ էր յոթանասուն տարով, այս տատիկս ինձնից փոքր է քառասուն տարով: Ծիծազում եմ ինք ինձ վրա, մոտենում եմ, փաղաքուշ կսմթում նրա խոնալ թշիկը, այ քեզ տատիկ...

Գյուղի ամենաբարձրադիր կետում մեր թափորը կանգնում է. դուռը կները մեղմ, անիբական մրմնջում են «Մնացարով», հետ Աշտարակ» երկը, կարգ է, իսկ տատիս շրջում են, որ նա վերջին անգամ նայի իր զուողին, որի ամբողջ մի գարը ծրարած տանում է իր հետ: Ես հանկարծ ուզում եմ պատկերացնել, որ քիչ հետո, այն աշխարհում տատս, ուրեմն, հանդիպելու է մեծ եղբորս, քեռուս, նկարիչ Գոգոյին, իմ առաջին ուսուցիչ Մնացական թամապյանին: Երկի նրանք կհարցնեն՝ ինչ կա-շկա աշխարհում, կհարցնեն նաև ինձնից...

Որովհետեւ երինքում ամպեր են երեսում, զուղուկահարները կրծասում են «Մնացարով», մանավանդ որ նրանք միայն նվազում են, իսկ երգի բառերը մտովի մենք ենք առում, այդ բառերը մեզնից համարյա ոչ ոք արդեն չի հիշում լրիվ...

Չէ, իզուր են նրան նոր շորեր հազցրել Հին շորերի գըրպանները մի օր տասա դաստարկեց իմ առաջ, քեռուս նամակն էր՝ գրված 1942 թվականին, մորս հարսանիքի թաշկինակը («Դիտե՞ս ինչ ուրախ էի...»), առաջին դաստարանի իմ գրչածայրը (ես դա դրել էի իմ կողքի աղջկա տակ, ծակել էր, մայրս երևանում էր, իբրև ծնող տատիս էին կանչել և տվել գրչածայրը՝ իբրև հանցանշան), քեռուս աղջկա ուղարկած բացիկը՝ Սև ծովի տեսարանով և, իշարկե, Կոմիտասի նկարը: Այս նկարը պատմություն ունի: Մի անգամ, տարիներ առաջ էր, տեսա, որ տասա հողաթափերի մեջ ինչ-որ թղթեր էր դրել, եղանակը անձրևոտ էր, ոտները մրսում էին... նայեցի, մի թղթի վրա Կոմիտասի նկարն էր: Ասացի, որ Կոմիտասն է, տասա չհավատաց, վարդապետն աշխարհիկ շորերով էր, խաղողի ձութը ձեռքին, այգում: Ես պնդեցի, որ ավելի ուշադիր նայի, ցերեկ էր, բայց վառեցի լուսը, տասա նկարը մոռեցրեց աշքերին, նայեց-նայեց ու, այս՝ ճանաչեց: Համբուրեց նկարի ճակատը, հետո զգուշորին, որ նկարի գեմքը չծալծվի, թուղթը տեղափորեց ծոցագրպանում: Ամեն անգամ, երբ զյուղ էի գնում, նա նկարը հանում էր ծոցագրպանից, ցույց տալիս, համբուրում ու դնում տեղը:

Նկարը հիմա հանած կլինեն նրա գրպանից, իմ գրչածայրի հետ: Ես կուզենայի, որ իր հետ նա տաներ այդ նկարը: Իմ սեղանին փոքրիկ մագնիտաֆոնն է, որի մեջ տատիս երգերն են: Մի երեկո ձայնագրեցի, պատշաճմբում թեյ էինք խմում: Նա նկարը հանում էր ծոցագրպանից, ցույց տալիս, համբուրում ու դնում տեղը:

Լոեց...

«Լոեց, ամպերը եկան, ծածկեցին երկինք»... Նա այդ երգը քայլերգի նման երգեց. սխա՞լ էր, թե՞ դա էր ճիշտը, շգիտեմ: Հիմա ես կարող եմ սեղմել մագնիտաֆոնի կոճակը, և տատա կերգի: Զեմ սեղմում: Մի՞նչե, իսկապես, միայն այս երգերը մնացին իմ տատից...»

...Հետո, երբ մենք հող էինք լցնում նրա վրա, հողը մի թիւ թաց էր անձրևից, և փոշի չեր բարձրանում, ինձ թվաց, թե մենք աշտարակցի պարզ այգեգործ տղերք ենք և խաղողի վաղերն ենք թաղում, որովհետև ժամանակն է: Ինձ թվաց տատա էւ, եթե այդ պահին բացի աշքերը, չի զարմանա, թե մենք ինչ ենք անում, նա վաղուց, շատ վաղուց էր պատրաստվում

հող մանելու, այս աշխարհում նա արդեն մրսում էր՝ ինչպես խաղողի վազերը, երբ ցուրտն իշնում էր Արագածի շորս գագագիներից... Եկող տարվա գարնանը, շգիտեմ որերորդ անդամ, խաղողի վաղերը կհանեն հողի տակից, և նրանց երակներում նոր բերքի ավելշը կգլուխ, իսկ տաշու... Ես ուզում եմ սեղմել մագնիտաֆոնի կոճակը, որ գոնի տատիս ձայնն աղատեմ հողի գերութունից, բայց հանկարծ զիլ աղմկում է կիլիթը: Նա լայն-լայն բացել է իր սկ աշուկները ու ձշում է առանց արցունքի. սովոր է: «Հիմա մաման կգա, տատիկ», ասում եմ ես նրան լուրջ ու բարձրաձայն: Ինձ թվում է նա հասկանում է, որովհետև կտրում է ձայնը, պլշած նայում ինձ:

Տատերը գնում են, տատերն անհետանում են, հալվում-վերջանում են մոմի պիս, և նրանց գնալով մենք մի քի զրկում ենք հերթաթից, մի քիլ շարանում ենք ու մեծանում ենք միանդամից:

Ո՞ւր գնացիր, այ տատ...

Փայտի ճաղերով իր փոքրիկ մահճակալում հանգիստ շնչում է կիլիթը, որի տատը իմ մայրն է: Ո՞ւմ տատն է լինելու կիլիթը...

## ԽՄ ՈՒՍՈՒՅՉՉՈՒՀԻՆ

— Նախաճաշ չի պիտի տամ,— մեր ուսուցչուհին՝ Աշխեն Պոլադյանը, այդ օրը պատժել էր երեքին՝ Արմենին, Կարոյին, ինձ:

Տանը երեսուն անգամ մենք արտագրած պիտի լինեինք նույն նախադասությունը: Որի մեջ նախորդ դասին տառասխալ էինք արել և, մանավանդ, գրել էինք փնթի ու վատ ձեռագրով: Ես հազիվ շորս անգամ էի արտագրել, մեր տունը ցուրտ էր, մեծ եղբայրս փայտ չեր ճարել, իսկ նախադասությունը երկար էր, անհասկանալի... Կարոն արտագրել էր վեց անգամ, իսկ Արամը հարմար էր համարել տեսրը մոռանալ տանը... Բնիկը Պոլադյանը մեղ նախ պարտադրեց գասերից հետո մնալ, արտագրել երեսունյոթ անգամ (ինչո՞ւ ոչ քառասուն, չեմ հասկանում) և, դրան գումարած, մեղ զրկեց այդ օրվա նախաճաշից: Մսով տաք կարկանդակ էր, իսկ ես առավոտյան միայն մի բաժակ թեյ էի խմել՝ ծիրանի շրով:

— Նախաճաշ չի պիտի տամ,— նորից իր սովոր նախա-  
15— Վ. Պետրոսյան

գասությունը կրկնեց ուսուցչուհին և, քանի որ զանգն արդեն հնչել էր, մյուսներին բաժանեց կարկանդակները: Տաք, մսով կարկանդակներ էին...

Մենք երեքով գուրս եկանք միջանցքի: Արամն ու ես շվշլացնում էինք, իբր թի՛ պա՛շ, շատ պետքներս է, Կարոն մոռաց նայում էր լուսամուտից գուրս և ծյան փաթիլների վոխարեն երեկի տաք կարկանդակներ էր տեսնում, որ իշնում են երկնքից:

Աշխեն Պոլադյանը հայ չէր, պոլսեցի էր, բայց մեզ հայոց լեզու էր տալիս: (Տարիներ պիտի անցնեին, մինչև ես հասկանայի, թե պոլսեցիները՝ ինչպես տեղացիներն էին կնքել բոլոր գաղթականներին, նույնպես հայ էին, դարձալ հայ էին, նույն հայն էին... Բայց տարիներ պիտի անցնեին, մինչև որ ես ու հասկանայի): Ընկեր Պոլադյանը շորոտի, մի բուռ կին էր, դպրոց էր գալիս միշտ նույն շորերով, բերետի պիս ինչոր բան ամառ-ձմեռ գլխին. խիստ էր, երբեմն նաև ծեծում էր մեզ, որովհետև մենք չէինք ուզում սովորել: Սովորել, հաս սովորել. գերմանացիներն արդեն հասել էին Կովկասյան լեռնաշղթա, ցուրտ էր, սոված էինք, իսկ նա համառորեն մեր գլուխն էր մտցնում գերանուներ, մակրայներ, հոլովներ, հաղար և՛ զամբ կրկնում, որ կմախքը «Խ»-ով է զրկում և «աղ» բառի հետ ոչ մի կապ չունի: Մեր գասարանցիներից միայն յոթը զեռ հայր ունեին, իսկ նա բարակ քանոնով խփում էր մեր մատներին, որ տառերը գեղեցիկ գրինք, շմոռանանք մաղագծերը, որ հատուկ սիրում էր: Իսկ ես չէի ուզում գեղեցիկ գրել, ես սոված էի, մեր տունը ցուրտ էր, ես սիրում էի միայն գրքեր կարգակ՝ «Մանոն Լեսկո», «Քվենալին Գորգարդ»: Այդ գրքերում տաք էր, գեղեցիկ աղջիկներ էին, ոսկեկար հագուստներ, ձիեր, բաղցրավենիք...

Օ՛, ինչպես էի ես ատում ընկեր Պոլադյանին:

— Մոտաւ աղանձ կա, — ասաց Կարոն, հնառ բաժանեց համբկ-համբիկ:

Աղանձի համբկները զգուշորեն, երկար ծամելով, մենք քարշ եկանք դպրոցի բակում և դիտմամբ ուշացանք հաջորդ գասից, որ մերոնք նախաճաշը կերած, վերջացրած լինեին...

Մեր կարկանդակները ուսուցչուհին տվել էր Հասմիկին, Վարդանին և Սերոբին: Երբ ներս մտանք, Սերոբը յուղու շրթունքներով ծամածություն արեց, Հասմիկը գլուխը կախ նստած էր, նա իմ կողքին էր նստում: Մենք մյուս դասա-

միջոցին, իհարկե, մի լավ դնդառեցինք Սերոբին, բայց որա նով մեր փորք, պարզ է, լցվեց, իսկ Կարոյի աղանձն ավելի էր գրգռել մեր խեղճ, մեր դատարկ ստամբունները: Այդ օրը մենք հաղար ու մի ծրագիր մտմտացինք, թե ինչպես վրեժ լուծենք ընկեր Պոլադյանից, որը դասերից հետո մեզ ստիպեց երեսունյոթ անգամ արտազրել մի երկար, անհասկանալի նախադասություն: «Երբ որ բացվին դռներն հուսու, և մեր երկրեն փախ տա ձմեռու: «Երբ որ բացվեն հույսու դռները, և ձմեռը փախալ մեր երկրից...»: Ես այդպես էի զրիտ էի գրել ու զբա համար հաղթական նայում էի ուսուցչին, որը պոլսեցի էր, իսկ ես հայ էի: Ընկեր Պոլադյանը տառ-տառ կարդաց բոլոր երեսունյոթ տողերը, հետո փափուկ-փափուկ ասաց: «Ելլպիս էլ սխալ չէ, միայն եթե արևելահայերն ես դարձել, ուրիմն ոչ թե հույսու, այլ՝ հույսի: Գեղեցիկ չես դրել»: Ընկեր Պոլադյանին դեռ ոչ ոք չէր տեսել մակարեւիս, ոչ ոք չէր տևել հաց ուտելիս, իսկ առաջին քառորդում, երբ նա մեզ երեսն սկսեց զրկել նախաճաշից, ինձ թվում էր՝ այդ ավելացած կարկանդակներն ինքն է ուտում: Բայց շուտով ամեն բան պարզվեց. ավելացած կարկանդակները նա տալիս էր այդ որը դասն ամենալավ սովորած աշակերտներին: Այդ օրը, ուրեմն, Հասմիկը, Վարդանը և Սերոբն էին լավ սովորել դասը: «Եկեք մի կտոր կարեի զցենք թանաքամանի մեջ,— առաջարկեց Սերոբը, — կամ հատակին մեխենք նրա՝ կրկնակոշիկները»: Չմեռ էր, իսկ ընկեր Պոլադյանը սովորություն ուներ կրկնակոշիկները հունիկ գասարանի մի անկյունում: Ուրիշ տեղ չէր հանում, որովհետև մի անգամ հանել էր ու երբ կամից հետո դնացել էր հագնելու, կրկնակոշիկ չէր եղել, ինչ-որ մեկը հագել-դնացել էր եվ լավ էր արել: «Մեխենք, որ ի՞նչ», մոայլ ասաց Կարոյն: «Կուպենա հագնել ու բերանի վրա կրնկնի»: Մենք պարզ-պարզ պատեկերացրինք, որ եթե աննկատ, նույն դիրքով ինչպես որ նա հանում է կրկնակոշիկները, մեխենք, հենց այդպես էլ կլինի՝ կհագնի ու շըրմփ... Ընկեր Պոլադյանին պատեկերացրինք հատակին փոված, լավ էր, բայց ես առաջարկեցի: Թե ավելի լավ է մութով զնանք նրա տան մոտ, թաքնվենք շքամուտքում ու երբ ուսուցչուհին տուն գա, սկսենք մլավել, ունալ ու հաշել: Արամը շատ լավ էր հաշում, ուսուցչուհին իսկականից կվախենա: Այդ տարիներին ամբողջ աշխարհում լուսաբողարկում էր, և իմ առաջարկն անցավ. կմլավենք, կհաշենք

ու կծլկենք աննկատ: Հարկավոր էր միայն որոշել որ օրը, մինչ այդ հարկավոր էր իմանալ, թե որտեղ է նա ապրում...

Հաջորդ գասին «լրացուցիչ» կարկանդակը բաժին ընկալ կարոյին: Ընկեր Պոլադյանը Վաշագանին սեռական հոլովով մի բառ հարցրեց, սա ասաց՝ անալի, դուռմը մտածեց, որ եթե անալին ի-ովէ վերջանում, ուրիմն սեռական է: Ընկեր Պոլադյանը բարկացավ ու ասաց՝ մտածիր, ճիշտն ասա: Վաշագանն էլ, թե՝ աղի: Ընկեր Պոլադյանը ժամաց. «Չիս հասկանում, թե ինչ ես ասում, բայց քեզնից անկախ համարյա ճիշտ ստացվեց: Մյուս անգամ կհարցնեմ բոլոր հոլովները, իսկ այսօր... նախաճաշ չի պիտի տամ»:

Մեծ դասամիջոց էր: Մենք եռեքով՝ Արամը, Կարոն և ես՝ չորս կարկանդակն առած նստել էինք աստիճաններին, բայց... չինք ուսում: «Կիսենք երեք մասի», ասաց Կարոն: «Դու կեր, — կիսաբերան հակածառեցինք մենք, — քեզ է պարզեատրելը. կարկանդակները գեռ տաք էին: Հանկարծ Կարոն վեր կացավ. «Մի բոպէ սպասեք, — ասաց, վերցրեց մի կարկանդակ ու գնաց դեպի գասարան: Ես ու Արամը պլշած նայեցինք իրար: Իսկ նա քիչ հետո վերադրձավ, բայց առանց կարկանդակի: — Ուսենք, — ասաց, — ամեն մեկս՝ մերը: Կերանք լուռ, խորհրդավոր, բայց Արամը չհամբերեց: «Որտե՞ղ պահեցիր...»: «Տվեցի Վաշագանին», սառը ասաց Կարոն:

Մենք նայեցինք իրար:

Մենք երկար նայեցինք իրար:

Մենք այդ ժամանակ չհասկացանք, որ շատ երկար նայեցինք իրար: Հազար ինը հարյուր քառասուներեք թիվն էր, մենք երերով միասին երեսունվեց տարեկան էինք և առաջին անգամ կարդին նայեցինք իրար: Ես միայն հիմա եմ հասկանում, որ այդ ժամանակ, երբ մենք ոչ թե առանձին-առանձին, այլ երերով միասին էինք երեսունվեց տարեկան, որ մենք այդ ժամանակ էակ տղաներ էինք, նույնիսկ շատ լավ...

Իսկ պատերազմը շարունակվում էր, իսկ ընկեր Պոլադյանը շարունակում էր մեր դուռմ զլովսները մտցնել, որ դերքայական դարձվածը զիսավոր նախադասությունից միշտ անջատվում է ստորակետով, որ ոչ թե կիլիկյա, այլ կիլիկիա է գրվում, որ Արաքսը միայն մեր դասարանցի Արաքս Մաղաքյանի անունը չէ, այլ նաև մեր ժողովրդի զիսավոր գետի, որ լավ ձևողիրը մարդուն պետք է նաև պատերազմի ժամանակ:

Ընկեր Պոլադյանը հագնվում էր միշտ մաքուր ու կոկ, բայց մի օր ես նկատեցի, որ նրա զգեստի արմունկներին անտեսանելի կարկատաններ կան, և երեք տարի նա դպրոց է դալիս նույն կոշիկներով...

Սրդեն գարուն էր, մենք ավելի քիչ էինք մրտում և ավելի շատ էինք ուզում ուտեւ իսկ ընկեր Պոլադյանը դարձալ շեր զլովին ջարդում էր իր օնախաճաշ շի պիտի տամ» դատավճիր: Բայց մենք արդեն չէինք վախինում այդ նախադասությունից: Կարոյի այն օրվա բայլից հետո, մեղնից էլ աննկատ՝ արդեն ամենք, ով «լրացուցիչ» կարկանդակ էր ստանում, դասամիջոցին վերադաբնում էր օրինական տիրոջը: Իհարկե, ընկեր Պոլադյանից թաքուն: Այդ տարվա գարնանը վերջացավ պատերազմը, իսկ վեցերորդ դասարանում արգեն ընկեր Պոլադյանը մեղ չէր դասավանդելու: «Մենք փոխվեցինք, ընկեր Պոլադյանը մնաց հինգում», շարախնդում էինք մենք, վերջապես աղատված նրա մի բուռ աջեղ կերպարանքից:

...իսկ մի քանի տարի առաջ, պատահարար, իմացա, որ ընկեր Պոլադյանը մահաներձ հիվանդ է: Կարողացա գոնել միայն կարոյին ու Վարդանին, ծաղիկներ, քաղցրավենիք առանք, գնացինք մեր հին ուսուցի տուն: Նա ապրում էր նույն այն գնացինք մեր հին ուսուցի տուն: Նա ապրում էր նույն այն երկհարկանի շենքում, որի խավար շքամուռքում մենք տարիներ առաջ երեք անգամ անօպուտ սպասեցինք նրա գալուն, որ մշակնը ու հաշենք... Մենք մի քանի բուռ կանգնեցինք զքամուռքում, քսանհինդ տարի էր անցել, ծխեցինք: Ես ու Կարոն նայեցինք իրար: «Դու առաջարկեցիր, — հիշեց Կարոն, — կպատմենք, կծիծաղինք»:

Ընկեր Պոլադյանը մենք պատկած էր փոքրիկ մի սենյակում, որ լցված էր հին իրերով, զրքերով, տեսրերի կապոցներով: Նա սկզբում շճանաշեց մեղ, իսկ երբ ճանաշեց, աշքերը լցվեցին: Մենք զգիտեինք ինչ անել, մենք նրա մահանալիքի առաջ կանգնած էինք մնացել քսանհինդ տարի առաջվան նման, և եթե նա արցունքի միջից շասեր նստեք, տղաներ, լէինք նստի: Ես առաջին անգամ էի տեսնում նրան լազ լինելիս, նա շատ էր սմբել, ավելի էր փոքրացել, թեպետ հայացքը, նույնիսկ արցունքների միջից, նույնն էր՝ խիստ և կենարունացած Խոհանոցից եկալ քսան-քսաներեկու տարեկան աղդշիկ: «Իմ վերջին աշակերտներից է», — ասաց ընկեր Պոլադյանը Աղդիկը փոքրիկ գավաթներով սուրճ տվեց մեղ, իսկ ընկեր

Պոլադյանին՝ ինչ-որ գունավոր հար: — «Ես արդեն լավ եմ, — ժամաց ուսուցչութին, — ես շատ լավ եմ, տեսնո՞ւմ ես, Արմենուհի, ինչ առողջարար հարեր հյուր եկան»: Նա, իրոք, ուրախացել էր մեր գալով, ու մենք կամաց-կամաց բառեր գտանք, նացած ձրագիրը Մահմակալի վերսում խունացած մի գծական է, — ասաց ընկեր Պոլադյանը, հետո մատով ցուց տվեց ձևիք, մեր գերդաստանը շատ մեծ էր, շատ...»: «Ես անցյալ էնին էր Պոլադյանը նայեց-նայեց մտածես և ասաց, որ հիմա մեջ Արմենուհին նախաճաշ կտա: Մենք երեքով իրար նայենքան առնենք, վրա բերի ես, և ծիծագեցինք՝ արդեն շորսով: Է դարձել և հանկարծ ընկեր Պոլադյանն ասաց. «Հավ տղաներ ըիտեհի, որ դուք էարկանդակները հետո տալիս էք պատժվածանդանիտանքը:...»:

Սևակը փոքր էր՝ լցված հին իրերով, հին հիշողություններով, դրվերի ու ահարերի կապցներով: «Կարելի՞ է զնանք պատրվակ էր, պարզապես երեք էլ հանկարծ փափկեցինք, որ լաց կլինենք հիշողություններից, մեր չաւորած մանկության կենդանի ապացույցներից, վախեցանք: Խոհանոցում Արմենուհին մեղ ասաց, որ բժիշկները որևէ հույս չեն տալիս՝ տարիքը, սիրոք, մի՞թե թիշ պատճառ կա, երբ յոթաշնուր մի մի քանի օր անց մենք տանում էինք մեր հին ուսուցչություն, որի խիստ հայցաքն արդեն փակվել էր կոպերի տակ, մնացել էր դեղին, կնճռապատ դեմքը, որ զարմանալիորեն պնում, մի քանի աշակերտ, ում կայողացել էինք գտնել, մի բանի ուսուցիչ, հարեանները: «Մահից առաջ նայում էր ձեր լուսանկարները, — ասաց Արմենուհին, — ամենքից նկարն էլ ուներ: Հետո ասաց, որ ով կուղինա, թող իր տեսությունը զա վերց-

նի: Նա խնամքով կարգավորել-կապել է, ըստ գասարանների, տարիների: Եթե ուզում եք, ձերք եկեք վերցրեք, որովհետեւ սենյակը պիտի հանձննեք շրջգործկոմին: — Հետո դարձավ ինձ, — իսկ Պոլսի գծանկարը խնդրեց ձեզ հանձնել: Երկու անգամ հիշցրեց»:

## ՄԵՐ ՄԱՅՐԵՐԸ

— Փեսայիցդ բաժանվում եմ, — ասաց Նազելի մորաքույրը, — պրօճավ... Մորս ասաց, իսկ Նազելի իր անունն է, որ բացի ինձնից ոչ ոք չի մտաբերում, մնացածներն ասում են տիկին Նազելի, Նազոն մորաքույր, ախշի Նազելի, հոյ Նազան...»

Նազելին, հիարկե, այնքան էլ հարմար չի գալիս իմ թանկագին վիափուկ մորաքույրը, որ ութուննինգ կիլոգրամ է կշռում, յոթ թոռ ունի, երեք հարս, որ մի անգամ, ավտոբուսում, այնպիսի չշրմֆացրել գրավանը մտնող մի ջահելի, որ սրան ստիպված են եղել ոչ թե միլիցիա, այլ նախ շտապ օգնության հիվանդանոց տանել:

— Էկ զըմքվեժի ձենք կտրի, — ևս հոկեյ եմ նայում, զըմքվեշուսույցն է: Հետո, ավելի մեղմ՝ մայրս դառնում է քրոչը, — ախշի, խելքդ ե՞տ ես տվիլ...

— Քառասուն տարի կորցրած խելքս եմ ես բերում, — սառը կտրում է մորաքույրս, — իրիկուն աշխատանքի եմ: Երեկ դիմում տվի, ընդունեցին:

— Նազելի մորաքույր, — որքան հնարավոր է փաղաքուշ հարցնում եմ ես, — Հարսներդ ո՞նց են, — զա իմ հիմնական թիման է, որովհետեւ մորաքույրս, փտիեմ, իր ոչ մի հարսին չի հավանում, — էն օրը Մարգոյին տեսա, սիմֆոնիկ համերգ էր եկել՝ ընկերունու հետ...

Ես մտածում էի, որ մորաքույրս կպատասխանի՝ «ՄԵՐ տա՞նն ինչ պակաս սիմֆոնիկ է, որ Մարգոն տոմսի է փող տալիս» կամ՝ «Բա հո մարգո՞ւ Հետո չեր զնալու, խեղմ երեխսս գիշեր-ցերեկ քափ ու քրտինք մտած փող է բերում, որ զա զնամիմֆոնիկ!...»:

Կամ նման մի բան: Բայց մորաքույրս դարբ-դառը նայում է ինձ և թվում է՝ հիմա լաց կլինի: Մայրս նախատական զառնում է ինձ, ուզում է ինչ-որ բան ասել, բայց քրոշն է հարցնում:

— Մի բաժակ սուրճ տա՞մ, — հետո, ինչ-որ բան հիշելով,

գառնում է ինձ,— մի ամիս է աղաշում-պաղատում եմ՝ ին սուրճը  
տար աղա: Տանը բոլորդ աղա եք:

— Երեկ ես ասել, մա,— հնարավորին չափ քնքուշ Գակա-  
ճառում եմ ես. ես հասկանում եմ, որ մայրս շախմատային  
ձիու բայլ գտավ ինձ տնից վոնդելու, բայց ականջներս քոր են  
գոլիս մորաքրոջ պատմությունն իմանալու համար, — զնա՞մ,  
Նաղելի մորաքրոյր...

— Զէ՞ ինչի՞ ես գնում, Վիդին զան, Էսօր շիմանաս, էգուց  
տելելիվորով կատեն: — Մորաքրոյրս մի կերպ տեղակորվում է  
զրասեղանի մոտ, իմ սիրելի պատվող բազկաթոռին, բազկաթոռս  
աղիովորմ մշակում է, ձռնչում, ասես օգնություն է Հայում  
ինձնից: Հետո մորաքրոյրս մոռայլվում է, ուզում է ինչ-որ բան  
ասել, բառեր չի գտնում և հանկարծ, ինքնաբերաբար, մատը  
տանում է մագնիտաֆոնին, սենյակը լցվում է «Հիսուս Քրիս-  
տոս» օպերայի ձայներով:

— Էս ի՞նչ սողոմ-գոմոր է...

— Հիսուս Քրիստոսն է և ոչ թե սողոմ-գոմոր— Հանդիսա-  
տանում եմ ես, — օպերա է, ձեր Քրիստոսի մասին:

— Հիսուս քեզ Քրիստոս, — խաշակնքում է մաքաքրոյրս, —  
էղ էլ ձեռ առնելու բան զառավ: Ամոթ չի՞... — լուս է, Հետո  
հանկարծ բորբոքում, — ասենք, որ մեծերն են ամոթները  
կորցնում, ձեղ ինչ ասենք...

Այ, սա արդեն նոր նոտա է մորաքրոջ սիմֆոնիայում:

— Մորաքրոջ մարդուն բան շատես, — Հանդիսավոր զգու-  
շացնում եմ ես, Հետո անցատում եմ մագնիտաֆոնը, Հանում  
«Հիսուս Քրիստոսը» և նոր, մաքուր կատես զնում: — Վոամ  
փիսան իմ թուլությունն է: Դու հո զիտե՞ս...

— Բա ո՞նց, դու նրան պիտի պաշտպանես, — վրա է տալիս  
մորաքրոյրս, — նոյն սորտը չի՞ք, իբր դու մի բարի պտուղն  
ես: Քսանութ տարեկան աղա ես, որը մի աղջկա ես շուլ-  
վում...

Մայրս խոհանոցից գալիս է՝ սուրճը ձեռքին, նա բաժակը  
գնում է մագնիտաֆոնի վրա, զղայնացած է, Հետո մի աթոռ  
քաշում, տեղակորվում բրոջ կողքին:

— Ախչի, դու Արթիկ չի՞ք զնացել, — մայրս, Հավանորեն,  
ուզում է Հետաձգել Հիմնական խոսակցությունը՝ մինչև որ ես  
չըվեմ, նա զիտի, որ եթե Հետաքրիբ պատմություն եղավ, ես

աշխարհով մեկ եմ անելու, պատմելու եմ Հազար տարի...  
ցո՞րեք էր Արթիկում...

— Ոտո կոտրվեր, չգնալի, — գանակով կորում է մարա-  
քրոյրս, — Արթիկ էի զնացել, բա ո՞ր զահնամն էի զնացել: Էդ  
խայտառակությունը բա որտե՞ղ իմացա, ու մատի՞ցս հոտ շեմ  
քաշել...

— Ի՞նչ խայտառակություն, այ պիշի, — մորս Հետա-  
քրորությունն էլ, ի վերցու, հասնում է եռման կետին. դա լավ է:

— Երեսունչորս թվին, մի՞տեղ է, որ Վոամը Բաքու զնաց:  
Չորս-հինգ ամիս մնաց: Մի՞տեղ է:

Մայրս շեշտակի նայում է ինձ, բայց Հետո Հայացքը մեղ-  
մանում է, չիմա, Հաստատ գլուխ, նա ինձ արտաքսելու է:

— Վիդին զան, — ասում է, — մի հատիկ սուրճ չունենք: Գնա  
մի կիլո առ, տղա զան, միանգամից աղա, բեր: Գնա, տղա  
զան...

— Լավ, մա՛, եթե դուրս ես անում, կդնամ, — ասում եմ ես  
խոռված, Հետո մագնիտաֆոնի վրայից զանգաղորեն դեն եմ  
տանում սուրճի բաժակը, ու ձեռքիս Հետ, աննկատելիորեն,  
սեղմում եմ ձայնագրելու կոճակը, բառասուճինք բռպի կծայ-  
նագրի, մինչ այդ՝ կգամ: — Բայց լավ շեք անում, մաղամ քույ-  
րեր...

— Գնա, զնա, սաստում է մայրս, — փողը խոհանոցի սե-  
ղանի դարակում է:

\*\*\*

Վերելակի մոտ Հանդիպում եմ Անուշին:

— Վերեկ, թի՞ն ներքն, — Հարցում եմ:

— Վերեկ՝ ո՞ւր, — քրքչում է Անուշը, որովհետև մենք իննե-  
րորդ հարկում ենք, իսկ շենքը իննհարկանի է:

— Վերեկ, երկինք, — ես սեղմում եմ կոճակը, չնկատելով,  
որ կիլոպի կարմիր աշքը վառվում է. Հասկանալի է, Անուշը  
սեղմել է, իսկ վերելակը, որ բարձրանում է ձռնչալով, աղմով-  
աղաղակով, ի վերց Հասնում է մեզ, — սիմ-սիմ, դուռը բաց, —  
դռները բացվում են, մենք մտնում ենք ներս, ես սեղմում եմ  
առաջին հարկի կոճակը, և իմ արևով, սրախոսում եմ, — ինչ-  
պիս տիեզերապնացները կասեին՝ զնացի՞նք...

Անուշը ծիծաղում է, իսկ իմ մեջ, կարծես, ներքին դող է

արթնանում, վերելակի երկու խորանարդ մետրը միանգամից լցվում է Անուշով, նրա բույրով, նրա հայացքով, նրա մարմնի թրթիռներով։ Ես վաղուց եմ ուզում համբուրել նրան, ևս վաղուց եմ նրան սիրում, այսինքն, վաղուցը ո՞րն է, անցյալ տարի այս ժամանակ նա դեռ դպրոցում էր, և ես՝ համալսարանն ավարտած կիրեռնետիկոս, նրան թոփվոի աղջնակի տեղ էի դնում, թեպես իմ վրա հաճախ էի զգում նրա հիացական (ինձ էր թվում հիացական) հայացքը։ Անսպասելիորեն, մի տարում Անուշը դարձավ կատարյալ օրիորդ, և դերերը փոխվեցին. Հիմա ես եմ նրան նայում՝ հիացած ու հիմար. վերելակն այսօր անսովոր արագությամբ է իշխում։

— Մի անգամ էլ շրաբրանա՞նք, — զյուտ եմ անում ես։

— Գնացի՞նք, — թիւ առաջվա իմ տոնով ասում է Անուշը և սեղմում է կոճակը։

Դանդաղ, ասես բախտից քրթմնջալով, վերելակը նորից է սկսում սիլիֆիան իր վերելքը, իսկ ես մտածում եմ, թե ինչ հրաշք կլիներ, եթե հիմա հանկարծ անջատվեր էլեկտրականությունը։ Մեր շենքի, թեկուզ ողջ քաղաքի, աշխարհի. Հոսանք վիներ, մենք մնայինք հարկերի արանքում։ Այդպես եղել է, չէ՞, մի անգամ նյու Ցորքում, մոտ քսանշորս ժամ քաղաքում խավար է տիրել, ոչ մի մեխանիզմ չի աշխատել։ Ինչ հրաշք՝ մութ կլիներ, Անուշը կվախենար, ես կհանգստացնեի նրան, մութի մեջ, իր պատահաբար, կդիպչեի նրան, կասեի «Ներողություն», նա կասեր «ոչինչ, Վիպեն, վախենում եմ», ես ափելի կմոտիկանայի, մենք կձուլվեինք իրար, շենքը կաղմեկը, մեկը ձայն կտար, թե «տեսնես լիփտում մարդ հովա՞մնացել», բայց ես համբուլորվ կփակի Անուշի շուրթերը, և մենք համրացած, անշշուկ կմնայի՞նք, կմնայի՞նք...

— Մենք նորից երկրի վրա ենք, պրոֆեսոր, — անցատվում եմ իմ երազանքներից՝ Անուշն է, նա ինձ է հառել իր մհծ, շլացուցիլ աշքերը, որոնց մեջ մի թիւ աղջկական խալ կա, մի թիւ՝ իմաստում կանացիություն. նա կարծես կարդացել է իմ բոլոր մտքերը, — եթե ուզում ես, պրոֆեսոր, մի անգամ էլ երկինք համրաբձենք, ես տասը բոպի ժամանակ ունեմ։

— Զեմ ուզում, — զարմանքով լսում եմ սեփական ձայնս, — ես տասը բոպի էլ ժամանակ չունեմ, նազելի օրիորդ, ես առհասարակ ժամանակ չունեմ...

Մենք դուրս ենք գալիս լույս աշխարհ։ Աշխարհը դատարկվում է, Սիրանագույն շորի մեջ, որ կրակի բոց է թվում, թպրտում է մի ուրիշ կրակ՝ Անուշի մարմինը։ Ինձ թվում է նոյնիսկ, որ ծիրանագույնը նրա կրակ-մարմնի անդրադարձն է, այլ ոչ թե գոյն։ Նա ինձ է նայում ինչ-որ բանի սպասումով, իսկ ես հանկարծ հարցնում հմ։

— Սայաթ-Նովան գիտե՞ս ինչ է ասել քո մասին։

— Սայաթ-Նովա՞ն, — իր հերթին հարցնում է Անուշը, — ե՞րբ, — հետո քրջում է, — հետաքրքիր է, երեք հարյուր տարի առաջ ի՞նչ է ասել Սայաթ-Նովան իմ մասին...

— Դուն կրակ, հագինդ կրակ...

— Կո՞ւր մե կրակին դիմանամ, — քրիջով շարունակում է Անուշը, հետո հարցնում, — զեպի ո՞ւր եք ուղևորվում, պրոֆեսոր...

— Դեպի պարենային, — յոթերորդ երկնքից մեր տան բակն եմ շրմփում ես։ Սուրճ պիտի առնեմ։ Միամիտ-միամիտ ասում եմ, — կիրակի օրերին ես մայրիկիս երեխան եմ։

— Քսանմեկ տարի կլինի շեմ խմել քո աղացած սուրճը, — ասում է Անուշը՝ զեպի ինձ ուղելով իր աշքերի լուսարձակները, — Հա, թիւ էր մնում մոռանայի, անցյալ օրը սիմֆոնիկ համերգին ո՞ւմ հետ էիր...

Անուշը հեռանում է, ասես ցնդում է, գոլորշիանում՝ երեանցան շոգ օդի մեջ, իսկ ես, հիմար, անօպնական, գնում եմ զեպի պարենային խանութի գծոնքքը։ Ո՞ւմ հետ էի։ Հա, ընդմիջմանը Կարինեն հանդիպեց, կոնստրուկտորական բյուրոյի աղջիկներից է, իսկ ես, ուրեմն, Անուշին շեմ նկատել, սատանա՞... Հետո հանկարծ հրճվանքից ուզում եմ ճշակ՝ խանդում է, Անուշը, ուրեմն, խանդում է ինձ, եթե նկատել է Կարինենին...

— Ի՞նչ եք ուզում, երիտասարդ։

Ուրեմն, այնուամենայնիվ, ինձ բերել-կանգնեցրել են պարենային խանութի սուրճի բաժնի մոտ։ Ես մի պահ ասես մուժի միջից, նայում եմ վաճառող կնոջը. «Սուրճ, — ասում եմ, — մի կիւռքամ սուրճ...»։

օ օ օ

Մենյակում մարդ չկա, երկի խոհանոց են զնացել, իսկ մազնիտաֆոնը դեռ պտտվում է, մի՞թե քառասունինդ րոպին

Հի լրացել... Ես արագ կտ եմ տալիս ժապավենը, հետո մազնիտափոնս առած զնում եմ լողարան:

— Մա, սուրճը բերի, — գոռում եմ լողարանից, — մի քիչ լվացվեմ...

— Լվացվիր, Վիգեն ջան, — լսում եմ մորս ձայնը, — մենք խոհանոցում ենք:

Ես բացում եմ ծորակը և միացնում եմ մազնիտաֆոնը: Լավ, ժարուր ձայնադրված է:

— Դե ասա, ասա, քանի Վիգենը շի եկել, ի՞նչ ես խառնվել իրար...

— Մի՞տդ է, որ Վուամը երեսունչորս թվին զնաց Բաքու...

— Միտս է, ի՞նչ:

— Բաքում, ուրեմն, սիրած է պահել:

— Բաքու ինչի՞ զնաց...

— Նոր էինք պսակվել, երկու տարի էլ չկար: Ասաց զնամ, նավահանգստում կաշխատեմ, ասաց շատ փող են տալիս, շորմոր կառնեմ: Առած շորը իրա զլիսին կպչեր:

— Հա, ինձ համար էլ քիշմիրի շալ էր բերել:

— Ո՞ւմ համար չէր բերել, հիմի եմ հասկանում, որ մեր աշըք քոռացնելու համար էր բերել: Ո՞վ զիտի, թե էդ իվետաշեղածի համար ինչեր առած կլինի:

— Ի՞նչ իվետա...

— Էդ, էլի, Վուամիդ սիրածը: Այս, մի էդ լիրը ձեռս ընկներ: Իսկ ես քառասուն տարի արել, զրել եմ, երեխեր, թոռներ, տունընտանիք, վերեռում աստված, ներեկում՝ Վուամս... Մի ձեռս ընկնեիր, իվետա աղջիկ...

— Լավ, աշըքը սրբի, երեխա չես, հիմի Վիգենս կդա: Էս քառասուն տարի քնել, հիմա՞ ես զարթնել:

— Այ կնիկ, որ քառասուն տարի հետո եմ իմացել, ի՞նչ անիմ: Ռւմի՞ց են իմացել, որտե՞ղ:

— Ասացի, էլի, Արթիկում, Սիրանուշը պատմեց, երկու հատ էլ նամակ ցույց տվեց, ոռուերեն, նկարն էլ՝ ճլորած, երեսը պեսնոտ: Գտած աղջիկն էլ մի աղջիկ լիներ՝ հաշակդ մեռնի, հաշակդ...

— Ասում ես Սիրանո՞ւշը պատմեց:

— Հա, հա, Սիրանուշը՝ հարազատ տալս, քո փեսա Վուամի հարազատ քուրբը: Էդ իվետա շեղածի հետ փեսադ նավով զնացել է Աստրախան, գնալը լիներ, ետ գալը լիներ...

— Կաթը թափվեց...

Դրանից հետո ձայնագրված էր սենյակի աղմուկը, հավանորեն կաթի հետևից զնացել են խոհանոցում: Այ քեզ պատմություն, այ քեզ Վուամ փեսա...

Ես դուրս եմ զալիս լողարանից, մազնիտաֆոնը զնում իր տեղը, հետո, իր լվացված-վերշացած, մտնում խոհանոց ու միանգամբից անցնում իմ խաչակրաց արշավանքին:

— Մորաքույր, — ասում եմ, — չգնա՞նք Բաքու, ուզում եմ իվետա մորաքույր տեսնեմ, քանիոթ տարի է չեմ տեսել, — քանիոթ տարին իմ տարիքն է: — Լավ էլ անուն է՝ ի-վե-տա...

— Նա՞ քեզ ինչ մորաքույր, — ճայթում է Նաղելի մորաքույր:

— Բա մորաքույր ամուսնու սիրածն իմ ի՞նչն է...

— Դու սուրճի չէի՞ր զնացել, — շշմած, միամյուտ հարցնում է մալրս:

— Ահա սուրճդ, մա, — զվարի սեղանին եմ զնում փաթեթը, մայրս մոտենում, բացում է փաթեթը, տնտղում սուրճը, հոտքաշում, իսկ ես նստում եմ մորաքույր կողքին, — բայց դու սիսալ ես անում, որ ուզում ես բաժանվել, Վուամ փեսան հանձարեղ մարդ է:

Մորաքույրս շի կարողանում շնչավորել հանճարեղ բառը, ավելի ճիշտ, երեկ հանճարեղ բառը ոչ մի կերպ շի հարմարվում իմ խեղճ, փառավոր Վուամ փեսային: Մորաքույր մտքում ուրիշ-ուրիշ բառեր են արթնանում իմ խեղճ, փառավոր Գոն-Վուամ փեսայի զլիսին՝ անառակ, լիրք, անզգամ, կապօկտրած...

— Հիմի էլ խոպան են զնում զրա նմանները, — ասում է մորաքույրս, — մեր հարևան Հեղինենի մարդը շորս տարի է զնում-զալիս է: Ասում են էնտեղ էլ տուն ունի, կնիկ-երեխսեք...

— Լավ, այ մորաքույր, տալդ ինչի՞ էր քեզ պատմում քառասուն տարի նավթալինի մեջ պահած էդ բամբասանքը:

— Տալս էլ իր մարդուց է վառված: Մարզը հիվանդանոցի զլիավոր հաշվապահն է, բուժքույրերից մեկի հետ է կապվել, Արթիկը դմբդմբում է: Էդ անառակը զիշերն էլ տուն շի գալիս, թե հիվանդանոցում օրը մեջ հերթապահ եմ. հաշվապահը հիվանդանոցում ի՞նչ հերթապահ, քեզ եմ հարցնում:

— Հետո՞...

— Հետո ի՞նչ, տալս կանչել էր, որ ես իրեն մի խելք սովորեցնեմ, ես էլ ասացի՞ ի՞նչ ես Ակվել, մնացել, վեր կաց, արի Երևան... Գնացինք բաղնիք, էղ բուժքույր-շնղածին տեսանք, մի շոփուռ, տղի մազերով, մարդաթող կնիկ: Գլխից էլ հոտ էր գալիս...

— Բայց Վուամ փեսան...

— Վե՛րջ,— նորից ճայթում է մորաքույր,— փեսա հափեսա, էսօրվանից նա քեզ ոչ մի փեսա: Բա էղ առալս... Ես ասում եմ, այ Սիրանուշ, վեր կաց, արի Երևան, երեխա էլ, փառք աստծու, շունեք: Նա՝ թե քեզ կանչել եմ, որ իմ հարազատ մարգուց ինձ բաժանե՞ս, ո՞ր մարդք հիմի չի անում էղ բանը:— Իմ մարդք,— ասացի: Վայ իմ միամիտ զլիին... Դետալս էլ ամեն բան տեղը-տեղին պատմեց, թաքուն տեղից հանեց ցույց տվեց Վուամի պահ տված նկարը, նամակները:

— Իվեսայի՞ն նամակները:

— Էղ լորի անունը շտաս:

— Մամ,— հանկարծ դիմում եմ մորս, որ զեռ սուրճն է տնազում և շատ մտահոգ է, — մեր հարեան Անուշին շառնե՞մ...

Մայրս զգաստանում է.

— Անուշի՞ն, ամառ-ձմեռ էն տկլորին,— ես հիշում եմ Անուշի ծիրանագույն շորը, ծիրանագույնի մեջ թրթուցող բոցը, որ Անուշի մարմինն էր, հիշում եմ Անուշի աշեղիք բաց կապույտ լճակները, — և տկլորի անունը շտաս, — մայրս մի-նի-յուրկայի դասակարգային թշնամի է:

— Վերաբերուն երկար է հագնում, ձմեռ կդա, կտեսնես: Բայց մայրը բաքվեցի է:

— Աման-աման,— վշվշալով մեջ է ընկնում մորաքույր,— Վիկին ջան, տղա ջան, էղ բանը շանես, մեր հարեան Սուսանին կուզենք, անող-զնող, սոսահկ-փուսիկ աղջիկ է, նրա ձինն ո՞վ է լսել, ծնկներից վերս ո՞վ է տեսել: Մանկապարտեզում դաստիարակչուի է, երեսուն-քառասուն երեխա որ պահում է, իր երեխներին կպահի ու կպահի: Էս կնիկն էլ մեղք է:

Անունը լավը չի, մորաքույր: Որ պսակվենք՝ կասեն Սուսան ու Սելյան:

— Քո անունը Վիգեն չի՞...

հանդաղատանքի անդուսադ մի աշիք է հանկարծ խլրտում իմ մեջ զեղի այս միամիտ-միամիտ իմ մորաքույրը, բայց դիմա-նում եմ, շեմ նահանջում.

— Այ, եթի Սուսանի անունը Քրիստինե լիներ, Մարիկատ կամ գոնե իվելտա...

— Էլի՞ էղ անունը...

— Հիմա, ի՞նչ է, բաժանվո՞ւմ ես մորաքույր մարդուց:

— Երեկ դատարան եմ գնացել: Ոչ ճաշ եմ եփում, ոչ շորեն եմ լվանում:

— Զենդ կտրի, այ ախշի, — միջամտում է մայրս, հետո դառնում է ինձ, — դու կնա ու էղ տկլոր Անուշին առ: Կդառնաք Անուշ ու Սարո...

Բռագո, մամ: Խսկ նազելի մորաքույր դեռ իր մենախոսությունն է մրմնջում.

— Ես իմ տունուտեղն ունեմ, թող ինքը վեր կենա-գնա Բաքու, իր ջերանին գտնի:

— Էղ ջերանն էլ հիմի մի վաթսուն տարեկան կլինի, մարդն էլ կարող է արդին տուն ստացած լինի էն աշխարհում:

— Բաց թողած կլինի մարդուն, կամ էլ խեղճ մարդք մեռած կլինի... դրա դարդից:

— Ավելի լավ,— շարունակում եմ ես, — իրար կդանեն՝ վկամն ու իվետան, ինչ էլ հարմար անուններ են: Հեն սերը, գիտե՞ս, ինչ քաղցր բան է, նազելի մորաքույր:— Հետո հարցնում եմ բավական լուրջ.— Նազելի մորաքույր, դու սիրահարված կա՞ս:— Հետո նույն լրջությամբ գանում եմ մորս:— Մամ, դու հորս սիրահարվել՝ նո՞ր ես առել...

Նազելի մորաքույրս ախուր-զարմացած նայում է ինձ:

Մայրս նույնական ախուր-զարմացած նայում է ինձ:

Հետո երկուուն էլ սկսում են լաց լինել: Հետո, լաց լինելով, մորաքույրս աթոռը մոտեցնում է մորս, երեխայի պես կուշուրում նրա թեփ տակ: Արցունքները հանդարտ գլորվում են նրանց մինած աշեղիք, իսկ նրանց շուրթերը ինչ-որ բան են մրմնջում: Աղո՞թք: Տեր ասաված, այս ի՞նչ արի ես:

— Նազելի մորաքույր, մամ...

Քույրերն ասես շեն լսում այս աշխարհի ձայները, շեն տեսնում ինձ: Հանդարտ, անձայն՝ նրանք շարունակում են իրենց լացը:

Ու ես հանկարծ եմ հասկանում, թե որքան լուրջ էր այս զրուցը նրանց համար և որքան տիմարն եմ ես, որքան սանձարձակ ու անսիրտ...

Մայրս տասնհինգ-տասնվեց տարեկան է եղել, երբ նրան ամուսնացրել են Հորս Հետ, իսկ երեսուներկու տարեկանում արդեն կորցրել է նրան... Մորաքրոջ նույն տարիքում տվել են Վուամին... Սիրահարվել են նրանք... Ի՞նչ անզգուշ հարց էր, որ ևս տվի... Եվ Հանկարծ Հասկանում եմ նաև, որ կյանքի երկար ճանապարհ անցած այս կանայք որոշ իմաստով զեռ տասնվեց-տասնյոթ տարեկան աղջկներ են, որովհետև իրենց ներսում այնքան շապրած զգացմունքներ ունեն: Չեն զգացել սեր, չեն զգացել խանգ... Անուշի պես, զույգ Անուշից ավելի գեղեցիկ ու բնական են եղել նրանք և աղջկական ամենափիլուն զգացմունքները սերը, խանդը, սպասումը սերմեր ունեին նաև նրանց հոգիներում, բայց այդ սերմերը մի ծիլ էլ շտվին, մնացին բանտարկված, մնացին անանուն... Մորաքրոջ ուշացած, քառասուն տարով ուշացած խանդը, որ քիչ առաջ ծիծաղելի էր թվում ինձ, իրականում որքա՞ն բնական էր ու կանացի...

Կարողացեք ներել մեզ, մայրեր, չ՞ե որ դուք ամեն բան կարող եք, եթե ընդունակ եք խանդելու վաթսունչորս տարեկանում և ապրել, երեխաներ ունենալ, տառապել ու սպասել՝ առանց սիրո ծիրանապույն հեթիաթի...

\*\*\*

...իսկ մորաքրոջ պատմության վե՞րջը: Նազելի մորաքրոյրս, իհարկե, շրաժանվեց իմ Դոն-Վուամ փեսայից, խոռվելը տնեց մի ամսից քիչ պակաս: Հաշտվեցին: Մորաքրոյրս Արթիկից բերել տվեց բաքվեցի գեղեցկունու նկարն ու նամակները և իր ձեռքով այրեց գազի վրա: Բայց թատրոնից, որտեղ աշխատանք էր գտել, գորս չեկավ: Հիմա էլ, իսկ այս օրերից անցել է վեց տարի, նա շարունակում է աշխատել իրեն հանդերձապահ, և հաճախ, երբ գահին վերջին շարքերում ազատ աթոռ է լինում, մանավանդ, երբ ներկայացման մեջ սեր կա՝ մորաքրոյրս նստում է, նայում, մորմորում և հաճախ լաց է լինում խեկական, ամենախսկական արցունքներով...

## ՄԱՆՈՒԿԻ ՍԻՐՈ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ուրեմն, Մանուկին փոխադրում են ուրիշ դպրոց: Մեր նշանավոր հնդյանը քայլայվում է: Մենք նստել ենք դպրոցի պատի տակ՝ Ռուբենը, Կարոն, Արամը և ևս: Մանուկը չկա, նա գնացել է, որ մորք բերի զպրոց: Ռուբենը գիրեկտորի կիսարաց դռան արանքից նրեկ լսել է ուսուցիչների զրույցը: Մանուկին, Հաստատ, փոխադրում են: Մեր գասղեկը՝ ընկեր Արուսը, փորձել է առարկել, չենց այդ ժամանակ էլ զուրը ծածկել են, և Ռուբենը չի կարողացել լսել շարունակությունը: Ինչպես բոլորի հայրերը, որ կենդանի են, Մանուկի հայրը նոյնպես ուզմաճակատում է: Հանկարծ նրան էլ նամակ չգրե՞ն...

Եկեք դպրոցը վասենք, — ասաց Կարոն, — մինչ հանգսնեն, զբաղվեն հրգեհով, Մանուկին կմոռանան:

Ռուբենը մեծավարի ընդդիմեց.

— Դոք' մ, դու էլ բան գտար: Երանի հորնումորդ, նրանք էլ գիտեն տղա ունեն:

Կարոլի հայրը զոհվել էր երեք ամիս առաջ, և Ռուբենը հանկարծ հասկացավ, որ հիմարություն արեց.

— Ուզում եմ ասել՝ ավելի խելոք բան մտածենք: Դպրոց վառելը կա ու կա:

— Մենք էլ գնանք ուր որ կտանեն Մանուկին, — ասացի ես, — ի՞նչ կինի որ... դպրոցը դպրոց չ:

Նայեցինք իրար երեսի, նայեցինք մեր դպրոցին: Լոեցինք, երեկ ուղեցինք մարսել իմ առաջարկը, ծամել, մանրացնել:

— Այսիր, ո՞վ բաժանեց մեզնից աղջկներին: — Հառաշ Ռուբենը, — եթի նույն դասարանում լինեինք, ինչի՞ պիտի նամակ գրեք դդումը:

— Ճիշտ է, — ասաց Արամը, որ մինչ այդ լսու էր:

— Դու էլ մի բարի պտուղ չես, — ասաց Ռուբենը, — կարծում ես չգիտենք, որ մեռնում ես Արփիկի համար: Հաջորդ զո՞ր դու ես լինելու:

— Քրոջ ընկերուհին է, Ռուբեն, համբ մի հանիր:

— Գիտենք, — կարծ կտրեց Ռուբենը:

— Ես կզնամ Մանուկի հետ, ես մորս կհամոզեմ-կգնամ: — Ես ծամել-վերջացրել էի իմ առաջարկը, որ ինձ սպանելի էր թվում:

— Գիտե՞ք ինչ զիրք եմ հարել...

— Ի՞նչ գիրք, Ռուբեն:  
— «Մանոն Լեսկոն»:  
— Ինչի՞մ մասին է:  
— Սիրահարության: Կեսից շատը այս գիշեր կարդացի,  
շունչ կտրվում էր:  
— Չէ, տղերք,— Հառաշեց Արամը,— լավ կլինի բոլորս էլ  
գնանք Մանուկի հետ, բայց նույն շնորհում թող աղջիկների  
դպրոց Ախնի:  
— Կատա՞ս կարդամ, Ռուբեն:  
— Երկու օրով են տվիլ, ևս հաղիվ կարդամ:  
Հեռվից երևացին Մանուկն ու մայրը: Մենք վեր կացանք, որ  
ընդառաջ գնանք: Մանուկը գունատ էր, մտախոհ: Մայրը տիսուր  
ժպտաց մեղ.  
— Սոված չե՞ք,— Հարցրեց:  
— Նոր կերանք,— ասաց Ռուբենը:  
Բատելու գաղափարից մեր ստամոքսները կծկվեցին:  
— Ինձ մոտ մսով կարկանդակներ կան.— ասաց Մանուկի  
մայրը,— երեք հատ է, կիսեք-կերեք,— ու պայուսակից հանեց  
թղթի մեջ փաթաթած ինչ-որ բան:  
— Չէ, ի՞նչ եք ասում, Անահիտ մորաքույր,— զժգոհեց  
Ռուբենը, բայց ձեռքը մեկնեց, որ վերցնի:  
— Դու տղաների հետ մնա, Մանուկ, ևս հիմա կդամ:  
Սենք նորից նստառեցինք պատի տակ: Թղթի մեջ, իրոք,  
կարանդակներ էին, համարյա տաք, բայց ուտելու ցանկու-  
թյուն շկար:  
— Լավ, նամա՞կն ինչի էիր զրել օրագրիդ մեջ,— Մանուկի  
վրա հարձակվեց Ռուբենը,— զրապան լունե՞ս, այ դդում:  
— Ելլորս շարվարն էի հագել, վախեցա զրպանում մոռա-  
նամ: Ո՞վ էր մտածում:  
— Ես տվի՞ն նամակը:  
— Չէ, ընկեր Կանեցյանի մոտ է: Ամենաշատը դրանից է  
սիրոս տրաքում:  
— Բա ասպետ դը Գրիյոն ի՞նչ աներ:  
— Ո՞վ:  
— Մանոնի սիրածը:  
— Տուր ինձ գիրքը, առավոտը կրերեմ: Չեմ ուտի, — ասացի  
ես,— մի գիշերում կկարդամ:  
Մեր շուրջը պատերազմի վերջին տարվա գարունն էր, թեպետ

մենք գեռ չգիտեինք, որ դա հենց վերջին գարունն է լինելու:  
Ռուբենը մեղնից մեծ էր երկու տարով և համարյա տասնվեց  
տարեկան էր: Նա ամեն բան հասկանում էր մեղնից ավելի և  
անառարկելի հեղինակություն էր դասարանի համար:

— Ալիսայինց դպրոցում էլ գիտեն, — Հառաշեց Մանուկը, —  
բայց նրանց դիրեկտորը լավ կին է, մի քիչ խոսել է վրան և  
վերջ, մորը նույնիսկ չի ասել:

— Ի՞նչ էր զրել գեղեցկուհիդ:

Մանուկը նայում է հեռու մի կետի և, ինձ թվում է, հեռվում  
տեսնում է Ալիսային: Միհայն ինքն է տեսնում:

— Մերը տանջանք է, տղերք, մարդ պիտի տանջվի, որ սի-  
րի, — մեզ համար անհասկանալի մի նախադասություն է ձևա-  
կերպում Ռուբենը, — եթե շտանջվի, էլ ինչ սեր: Մանոն կե-  
ռուն որ կարդաք, կհասկանաք:

— Տուր կարգանք, որ մենք էլ հասկանանք: — Իմ մեջ ան-  
հաղթահարելի երազ է դառնում կարդալ այդ գիրքը: — Հը՞,  
Ռուբեն, կտա՞ս...

Ռուբենը աշխատում է շեղել խոսակցությունը:

— Հիշո՞ւմ եք մեզ ոնց բաժանեցին աղջիկներից:

Ի՞սարկե, հիշում ենք, թեպետ երկու տարի առաջ էր: Ինչո՞ւ  
բաժանեցին: Աղջիկներից շատերը լաց էին լինում, ուրախ  
էր միայն Սոնան, մեր զասարանի ամենագեղցիկ աղջիկը,  
որ երկար ցյուսեր ուներ. «Էլ չեք քաշըշի իմ մաղերից»: Իմ  
սիրած աղջիկը կլինի Սոնայի նման, անպայման երկար մաղեր  
կունենա, բաց կապուտ աշքեր: Հենց պատերազմը վերջա-  
նա, կսիրահարվեմ:

Վերջապես Մանուկի մայրը դուրս եկալ ընկեր Արուսի հետ:  
Նայեցին մեր կողմը, ինչ-որ բան ասացին իրար ու գնացին  
գեպի փողոց:

— Տուն գնացեք, — ասաց Ռուբենը, — երեկոյան ուզմագիտու-  
թյան դաս կա: Մանուկ, մորից կիմանաս, թե ինչ են ասել: Ես  
կմնամ-կպտնեմ Ալիսային, կհանգստացնեմ...

Փոքրիկ, վիթխարի մեր զատնիքն առած՝ շարժվեցինք  
տուն, Ռուբենը եկավ մինչև փողոցի մուտքը, որ աղջիկների  
դպրոցինն էր:

— Մի ծխախոտ ունեմ, — ասաց, — կծխեմ, մինչև Ալիսան  
դուրս գա:

Երանությամբ, նախանձով նայեցինք Ռուբենին, որ ի՞նչ արկի,

ծխախոտ չուներ: Բայց հարկավոր էր, որ մեղանից մեկը մեծ լիներ և տարիքով և ամեն բան անելու կարողությամբ: Այդ մեկը Ռուբենն էր:

— Ռազմագիտությունից հետո երեխ ձեզ ուրախացնեմ,— ասաց Ռուբենը: — Տանը կասեթ, որ կուշանաք: Կասեթ հերթապահ եք:

— Բա՞ն զիտես, — վրա տվինք շորտով:

— Ռուբենը ամեն ինչ զիտի: Դնացեթ:

Պատերազմական փողոցի տիրության միջով մենք գնում էինք, շուրջնառվ բաժանվել իրարից, որովհետեւ առանձին-առանձին կկռանայինք Մանուկի ուսերին իշած հոգաի ծանրությունից:

— Պաղպաղակ ուտենք, — ասաց Արամը, — երեխու ոուրի ունիմ:

— Ինձ մոտ մի ոուրի է:

— Իմը կոպեներ են:

Իմ գրամանում ոչինչ չկար, բայց հավաքված փողով մենք մի պաղպաղակ կարող էինք առնել:

— Սկզբից դու կեր, Մանուկ, — ասաց Արամը, — քո սիրտը չիւտ վառվում է:

Մանուկը կոտրված նայեց Արամին, բայց պաղպաղակը վերըրից:

— Եթե Ալիսան լիներ, պաղպաղակը իրեն կտայինք, չէ՞ , կտայի՞նք:

— Դժբո-դմբո խոսեց, — նախատական ասաց Արամը, — ուղո՞ւմ ես, հասցնենք Ռուբենին, թող Ալիսային տա:

— Կ՞ալիի, — ասացի ես:

— Կ՞ալիի, — հառաշեցինք շորտով:

— Մի օր այնքան փող ունենանք, որ ամեն մեկիս համար առանձին-առանձին պաղպաղակ առնենք, — տիսոր ասաց Մանուկը:

— Ի՞նչ է, զգվո՞ւմ ես ընկերներիցու: Դրա համար էլ քեզ ենք առաջինը տալիս: Մենք քննից լւենք զգվում:

(Մանուկը զա շեր ուղում ասել: Մենք հետո, տարիներ հետո պիտի հասկանայինք, թե նա ինչ էր երազում: Արամն էլ զա շեր ուղում ասել և նույնպես տարիներ հետո պիտի հասկանայինք, թե նույնությունը Մանուկին մեկնեց պատերազմի վերջին դարնան մեր առաջին պաղպաղակը):

Ռազմագիտության պարագմոնքը վերջացավ ժամը յոթին:

— Մենք մնանք, զնդացիրը մի քիչ քանդենք-հավաքենք, — ասաց Ռուբենը կապիտան Անտոնյանին:

— Մնացեթ: — Կապիտանը շտապում էր, — բանալին կտաք պահակին, վարազույթները լավ կծածկեթ:

Գասարանի մյուս տղաները գնացին, մնաց մեր հնգյակը: Թիվետ դեռ լավ չեր մինել, բայց Ռուբենը խնամքով ձգեց վարագույրները և, պայուսակից խորհրդավորությամբ ինչ-որ գիրք հանկուվ, ասաց:

— Դու կարդա, վահի:

— «Մանոն Լեսկո՞», — հրճվանքով ճշացի ես:

— Զէ, դու էլ ես զնալու ուրիշ դպրոց, — հառաշեց Ռուբենը:

Ես գիրքը խլեցի նրանից. բարալիկ, մաշված գիրք էր՝ զեղցիկ գծանկարներով: Շապիկին մի աղջիկ էր նկարած տիսոր աշբերով:

— Կ՞ասցնե՞նք կարդալ-վերջացնել:

Ռուբենը գիրքը հս վերցրեց:

— Ես կեսը կարդացել եմ: Նայիմ՝ մինչև սբանկ: Կուտամիմ, իսկ մնացածը կկարդանք: Ամենահետաքրքիրը վերջն է:

Եվ Ռուբենը սկսեց Մանոն Լեսկոյի և ասպետ դը Գրիգորի զժբախտ սիրո պատմությունը Ռուբենն, զքքի հեղինակը ֆրանսիական մի քաղաքում պատահաբար հանդիպում է զեղցիկ, անառակ աղջիկների մի խմբի, որոնց զինվորները տանում են նավահանդիստ, նավ նստեցնելու, որ ուղարկեն հեռու, Ամերիկա: Այդ անառակ աղջիկների մեջ...

— Ի՞նչ է նշանակում անառակ, Ռուբեն...

Ռուբենը տհաճությամբ նախ ձեռքը թափ է տալիս, այսինքն, մի ընդհատեթ, բայց քանի որ աշխարհում չկա հարց, որի պատասխանը նա չիմանա, մի փոքր մտածելուց հետո ասում է.

— Անառակ, այսինքն, դուրս ընկած, փողոցային աղջիկ, որ սիրահարվում է օրը մեկի վրա: Զեր խելքի բանը շէ, կմեծանար-կհասկանաք:

Ռուբենն, այդ անառակ աղջիկների խմբի մեջ հեղինակը տեսնում է մեկին, որ ամենագեղցիկն էր և հուսահատ լաց էր լինում, զա Մանոնն էր: Հետո տեսնում է նրա սիրած տղային, որը և պատմում է, թե ինչպես է ծանոթացել Մանոնի հետ,

ինչպես են սիրահարվել և ինչպիս քանի անգամ Մանոնը դավաճանել է իրեն:

— Ես կտպանեի այդ աղջկան, — մուալլ ասաց Մանուկը: — Ալիսան իր նամակում զրել էր, որ մինչև մահ կտիրի ինձ:

— Կտիրի, — ասաց Ռուբենը:

Ի՞նչ է նշանակում սիրել մինչև մահ:

Արդեն մթնել էր: Ռուբենը գրպանից հանեց երկու մոմ, ամրացրեց գնդացրի փողի ծայրին և վառեց.

— Այսպես ավելի խորհրդավոր է, հետո էլեկտրականությունն ափսոս է:

— Մոմի տակ քանի՞-քանի՞ զիրք են զրել... — ասացի ես:

— Կարգա, — զիրքը ինձ մեկնեց Ռուբենը:

Եվ ես սկսեցի կարդալ, և մեր ուղղագիտության կարինեալ կամաց-կամաց սկսեց լցվել մանուշակագույն մի մշուշով, երկու դժբախտ սիրահարների տիտոր, զարմանալի տիտոր արկածներով: Ես կարդում էի, տղաներն ասես չէին իսկ շնչում, որ շնանգարեն, որ կլանեն այդ զրքի բառերը՝ անսովոր, անհասկանալի, անհավասարի:

— «...Մի՞թե ողջ աշխարհը երկու հավատարիմ սիրահարների հալրենիքը չէ: Մի՞թե միմյանց մեջ չեն տեսնում իրենց հորն ու մորը, իրենց բարեկամներին, հարստությունն ու երջանկությունը»:

Մոմն այրվում էր, նրա թույլ, անիրական լույսի տակ փայլում էին պատերի տակ, սեղանների վրա զրված հրացանները, նոնակները, գնդացիրը, որ մոմակալ էր դառել: Ես կարդում էի, և մեր պատանեկան հոգիների լայն բացված աշերի առաջ լայնանում էր կյանքը, ավելի սիրելի ու թանկ էին դառնում մարդիկ՝ ծանոթ, թե անծանոթ:

Օ՛, ինչպէս է սիրում խեղճ ասպետը իր Մանոնին, քանի՞ անդամ է նրան ներում, ինչպէ՞ս է հավատում աղջկա բոլոր խոսքերին: «Դու հրաշալի ալբիմիկոս ես, — ասում է ասպետը, — դու ամեն ինչ ոսկու ես վերածում»: Այսինքն, այնքան գեղեցիկ է Մանոնի սիրը, որ ամենաաղքատ տան մեջ անգամ ասպետն իրեն երջանիկ ու հարուստ է զգում: Եվ ի՞նչ է պատասխանում Մանոնը, «Եյդ զեպքում դու աշխարհի ամենահարուստ մարդը լինես, որովհետեւ, եթի մինչև այժմ քո սիրո նմանը չի եղեւ, ապա նույնպես անհնար է, որ որեւէ մեկը այնքան քնքշուրեն սիրված լինի, որքան դու: Ես երբեք... արժանի շեղա

այդ արտասովոր սիրում... Ես քեզ այնպիսի տառապանքներ պատճառեցի... Ես թիթեամիտ եղա ու դյուրաթեք, և, քեզ խեցեղորեն սիրելով, ապերախա գտնվեցի... Ես արտասվել եմ միայն դեպի քեզ զգացած քնքշությունից ու կարեցանքից...»:

Այսպես խոսում են սիրահարներն իրար հետ, և դժբախտ ապետը քնում է, իրենց խրճիթը տեսնելով իրեւ մի պալատ՝ արժանի աշխարհի առաջին թագավորին...

— Հասկանո՞ւմ եք, թե ինչ բան է սերը, — Ռուբենի ասածը մեզ նորից վերադարձնում է ուղմագիտության կարինետ, մենք տեսնում ենք փակված վարագույները, նայում ենք սենյակի թանձր մթությանը և սարսափով նկատում, որ մոմերը վերջանալու վրա են:

— Մեկը հանգըրու, — ասում է Մանուկը:

— Կարգա, ես մի հատ էլ ունեմ, — հանգստացնում է Ռուբենը, — ավելի մեծ մոմ է:

Մենք, իշարկե, ժամացոյց շունենք, բայց գիտենք, որ ուզ գիշեր է, բայց մենք մոռացել ենք նաև մեր մայրերի ու տան մասին, մանավանդ որ Ռուբենի խորհրդով ասել ենք, որ ուշ հնը գայու:

Վերջին էշերը կարգալիս իմ ձայնը զողում էր.

— «Քսանչորս ժամից ավելի իմ շրթները պահեցի Մանոնիս երեսին ու ձեռքերին: Իմ դիտավորությունն էր մեռնել այնտեղ, սակայն երկրորդ օրվա սկզբին ես մտածեցի, որ իմ մաշից հետո նրա մարմինը վայրի գաղանների կեր կդառնա... Փշրեցի սուսերս, որպեսզի նրանով զերեզման փորեմ, սակայն այդ ամենը ավելի քիչ օգնեց, քան իմ սեփական ձեռքերը... Նախքան փոսն իշեցնելը հազար անգամ համբուրեցի նրան՝ ամենակատարյալ սիրո բուն կրակով: Ես նստեցի նրա մոտ, սիրու շեի անում փոսը ծածկելու...»:

— Քեզ ի՞նչ պատահեց, Մանուկ...

Մանուկը լաց էր լինում:

Ռուբենը մեծավարի շոյց նրա մազերը, հետո զրպանից հանեց մի ծխախոտ, վառեց մոմի կրակով, մեկնեց Մանուկին:

— Հետո կտաս ինձ:

— Զեմ ուզում, — փորձեց աշքերը սրբել Մանուկը, — շեմ ուզում, դու ծխիր:

(Այդ գիշեր մենք մեծացանք, հանկարծ ու միանգամից մեծացանք):

— «... Ես առնավետ թաղեցի այն ամենակատարյալ, ամենպեսէցիկ էակին, որ երբեք ապրել է երկրի վրա: Այնուհետև պատկեցի զերեզմանի վրա՝ երևս զեպի հողը, աշքերս փակեցի՝ այլևս շրացելու դիտավորությամբ...»:

Սրդեն ես էլ հավիվ էի զսպում լացու:

— Մխիր, — Ռուրենը հիմա էլ ինձ մեկնեց ծխախոտը:

Ես վերցրի ու միանգամից ներս քաշեցի դառը ծովսը: Ինձ թվաց՝ խեղդվում եմ, բայց Ռուրենը չծաղրեց, ծխախոտը վերցրեց իմ ձեռքից, զրեց բերանին և հանգիստ ներս քաշեց ծովսը:

— Կսովորես: Ես էլ առաջին անգամ համարյա խեղդվում էի: Ինչ աղա է եղել, չչ՞՝, ասպետ դը Գրիյոն...

(Հետո, հիշում եմ, մենք երկար նստեցինք մութի մեջ, որովհետև մոմք վերջացել էր և մութի մեջ լավ էր: Ռոքա՞ն նստեցինք, ի՞նչ ասացինք, մնացել է թանձր, կապույտ մի մշուշ: Երկի քնել էինք, որովհետև արթնացանք պահակի ձայնից:

— Ինչ եք անում էս մութ-գիշերին, ա՞յ շան տղերը:

Պահակը մեզ վերագարձրեց գպրոց, ուազմագիտության կարինետ, վերագարձրեց այն մեծ ու անհասկանալի աշխարհը, որ հետո էլ միշտ մնաց մեծ ու անհասկանալի):

Փառապահ

Մի քանի օր հետո Մանուկին, իրոք, փոխադրեցին ուրիշ գպրոց: Եատ տխուր օր էր, բայց մեր քառյակը հանգիստ էր ու տղամարդի: Մենք հաստատ որոշել էինք: Կամաց-կամաց մեզ հաջողվեց համողել մեր մայրերին և ամսվա վերջին մենք նորից հավաքվեցինք իրար զլիսի՝ արդեն ուրիշ գպրոցում: Վերջին օրը Ռուրենը զերեկարի զարակից թոցրեց Ալիսայի նամակը: Բնակե՞ս, ոչ ոք չիմացավ:

(Տարիներ հետո ես հանդիպեցի մեր դասղեկին՝ ընկեր Արուսին, խոսեցինք զպրոցից, և նա մտարենց մեր փախուստը. «Դուք սքանչելի տղաներ էիք, — ասաց նա, — դուք լավ արիք, որ մենակ չթողեցիք Մանուկին»: «Մանոն լեսկոն օգնեց, — ասացի ես, — Մանոն լեսկոն...»):

Իսկ վերջերս, երբ մենք հավաքվել էինք մեր հին դասարանով, կանչել էինք նաև մեր հարեան զպրոցի աղջիկներին Ալիր, մենք աղջիկ դասընկերուհի այդպես էլ շունեցանք: Աղ-

ջիկները բոլորը շէին եկել: Ալիսան եկել էր իր ամուսնու հետ: Մանուկը կնոցը շէր բերել: Երբ ցրվելու վրա էինք, Ռուրենը հանկարծ հանգրեց լույսերը, մոմեր վառեց և, ինձ մի գիրք մեկնելով, ասաց՝ կարդա: Նոր տպված զիրք էր, ես խկույն տեսա վերնագիրը՝ «Մանոն լեսկո»: «Կարդա, — ասաց Ռուրենը, — վերջերից կարդա...»: Անցյալը արթնացավ միանգամից, ես կարդացի մի քանի տող, կարդացի մի քանի էջ, բայց... բայց այն Մանոն լեսկոն շէր՝ հին, մաշված բարի ու անպաշտպան Մանոն լեսկոն. Նա մնաց պատերազմի վերջին գարնան գիշերում, մեր հին գպրոցի ուազմագիտության կարինետում, գնդացրի փողի ծայրին վառվող մոմերի մաքուր, հեքիաթային լույսի մեջ: «Լավ չես կարդում», ասաց Ռուրենը: Եվ լույսը վառեց: Մենք նայեցինք, Մանուկը դնացել էր:

## ՄԻ ՌԻՐԱԽ ԵՎ ՏԵՇՈՒՐ ՕՐ, ԵՐԲ ԱՇԽԱՌՀՈՒՄ ՊԱՏԵՐԱՋՄ ԷՐ

Գործի բերումով, արդեն քանի տարի է, ես օրը երկու անգամ անցնում եմ Վահակիկնց տան մոտով՝ առավոտյան և երեկոյան: Եվ ամեն անգամ, ինքնաբերարար, ուղում եմ նայել լուսամուտից ներս: Նրանց տունը առաջին հարկում է, փողոցի կողմից պատռհանին երկաթե ցանց է մեխած և համարյա ոչինչ չի երկում: Երկի վարագույներ էլ կան ներսի կողմից: Երկաթե ցանցը այն տարիներին էլ կար, վերջերս ներկել են սպիտակ զույնի, շատ չի զանազանվում պատռհանի յուղաներկից և մետաղը չի ժանառուի, լավ է:

Եվ ամեն անգամ, մանավանդ երբ տխուր եմ լինում, ինձ թվում է՝ երկաթե պատռհանի մյուս կողմում ես տեսնում եմ Վահակիկ զեմքը, նրա բաց կապույտ, միամիտ աշքերը: Թվում է, որովհետև ես վաղուց, շատ վաղուց է, որ այլևս չեմ կարող նրան տեսած լինել: Զեկա նաև Վահակիկ մայրը՝ ցանցի հետեւմ ուրիշ մարդիկ են: Ո՞վ, չգիտեմ, չեմ ուղեցել իմանալ:

Փառապահ

Այդ օրը 1943-ի սովորական օրերից էր. ես Վահակիկն պիտի օգնեի շարադրություն գրելու, իսկ Կարոն երկրաշափության խնդիրներ պիտք է բացատրե: Սարգիսը, Ֆելիքսն ու Ռուրե-

նը ասացին. «Մենք էլ ենք զալիս»: Վահիկը տհաճությամբ, բայց վախով նայեց հատկապես Սարգսին: Բայց ինչ պիտի աներ, եկեք՝ ասաց:

Վահիկը իր բաց գույնի կոստյումն էր հագել. դա նրա երկու կոստյումներից մեկն էր, դա նաև մեր զասարանի երկու կոստյումներից մեկն էր, որովհետև զասարանում ուրիշ ոչ ոք կոստյում չուներ: Մի քանի օր առաջ Սարգիսը Վահիկի կոստյումին նորից թանաք թափեց, իբր թե պատահաբար, բայց իրականում դիտմամբ: Լավ են մաքրել, և թանաքի տեղը համարյա չի երևում, — մտածեցի ես, — երկի մայրն է մաքրել: Սարգսին դրա համար երկու օրով հեռացրին դպրոցից, բայց քանի որ նրա հայրը զոհվել էր ուղամաճակատում, նորից ես ընդունեցին: Վահիկը կորիկի գեմք ուներ և այտերը այդ գժվար օրերի համար կարծես զիտմամբ կարմիր էին: Կուշտ, մայրս կասեր՝ կաթնահունց գեմք ուներ Վահիկը: Ուղղակի ամոթ էր այդ տարիներին այդպիսի դեմք ունենալը: Մենք չենք սիրում նրան, իսկ Սարգիսը պարզապես ատում էր: «Ենումբ ունենամ, կցեմ դրա զլիսին», — ասում էր նա: Ռումբ, ընական է, չուներ: Մեզանց ոչ ըուներ ոչ ուումբ, ոչ ատըրքանակ, փայտից թրեր էին՝ այդ էր մեր ողջ սպասազնությունը: Ե՞րաք նմաններին փայտե թրով պիտի մորթես, որ երկար տանչըլեն», — ասում էր Սարգիսը, որ մեր զասարանի ամենաբարի տղան էր: Անզոր, անօդնական կատաղությունից էր դա, աշխարհի կնճռոտ բաները հասկանալուց: Սարգիսը միանգամբ դառնացավ, երր ստացան հոր մահվան թուղթը, որովհետև Վահիկի հայրը երևանի ինչ-որ ճաշարանում հաշվապահ էր: «Թոքերից թուլլ է», ասում էր Վահիկը, և այդ բաների ժամանակ նրա այտերն ավելի էին կարմրում: Մենք հոգում էինք, մենք չենք հավատում, իսկ մի օր Վահիկի հայրն իսկականից մեռավ: Թոքախտ էր ունեցել և դրա համար պատվել էր բանակից, իսկ մենք՝ զարշելիներս, շարախոսում էինք, կասկածում: Վահիկի մայրը աշխատանքի մտավ ամուսնու փոխարեն, և նրանք շարունակեցին լավ ապրել, այսինքն ապրել, որովհետև Վահիկը միշտ կուշտ էր, մենք միշտ... բաղցած:

Վահիկը մեր դպրոցի ամենախելոք աշակերտն էր (խելոք, ալսինքն ոչ շար), ամենակուշտը և ամենաանընդունակը: Ան-

սահման բարի ու փխրուն տղա էր նա, ևս դա հիմա, տարիներ անց, առանձին մի տիբրությամբ եմ մտաբերում, որովհետև մենք շատ կինք դառնացնում նրան: Հատկապես Սարգիսը նրա դեմքին միշտ մի խղճալի ճպիտ կար. նա երևի ինքն էլ ամաշում էր, որ մենք բաղցած ենք, ինքը կուշտ, մենք դպրոց ենք զալիս մեր միջ եղբայների ու ուղմաճակատ գնացած հայրերի հնամաշ շորերով, իսկ ինքը երկու կոստյում ունի, դեղին գույնի շարֆ: «Սարգսին կասես մեր տունը չվասի, — ականջիս շշնչաց Վահիկը, — կասես, հա՞...»: Հենց այսօր առավոտյան Սարգիսը զասարանում հայտարարեց, որ Վահիկինց տունը վառելու է: Ես ժպտացի, Վահիկ, Վահիկ, գու շգիտես, թե ինչ սիրու ունի Սարգիսը, նույնիսկ քեզ համար նա իրին կրակի մեջ կցի, էլ ո՞ւր մնաց...

Երբ տան գուռը բացում էր, Վահիկի ձեռքերը դողում էին՝ կարոն դա նկատեց, բանալին ինքը վերցրեց, վարպետորեն պտտեց փականի մեջ: Ներս մտանք, մի սենյականոց տուն էր: «Ես այստեղ եմ քնում, — բան գտավ ցույց տալու Վահիկը, որովհետև մահճակալը փափուկ էր, արքայական, մահճակալին մեծ, փեքած բարձեր էին: — Փետուր է լցված, իմն է փետուրը, իմը հորս բարձն է, մամայինը բամբակ է»: Եշ, միամիտ էշ, — երեսուն տարվա հեռավորությունից շշնչում եմ հիմա, բայց... հիմա, այն ժամանակ ես էլ շար նայեցի այդ փքված-բեռնավորված մահճակալին: Այն ժամանակ Վահիկինց տան կոկ, տաք տեսքը կատաղցրեց մեզ: Կարոն մեր մեջ ամենազուսպն էր, նա փորձեց ամպերը ցրել. հանեց երկրաշափության զիրքը, տետրերը, զարձավ մեզ. «Դուք բակում մի բան արեք, ես մի երկու խնդիր լուծեմ էս դղումի համար»: «Սովոր եմ», ասաց Սարգիսը: Ո՞վ շեր սոված: «Որ ի՞նչ, — քրթմնջաց Կարոն, — ես էլ եմ սոված»: Վահիկը ինչ-որ բան կմկմաց, իրեն թվաց՝ միայն Կարոն կլսի. «Սրանք գնան, ես քեզ ուտելու բան կտամ, Հովհիկին էլք: Հովհիկը ես էի. ես նրա համար շարադրություն էի զրելու: «Ի՞նչ, — ծղրտաց Սարգիսը և նրա հետ՝ Ֆելիքսը, Ռուբենը, — բա մե՞նք, ես էլ վաղը հետդ ուղմագիտություն կապարապեմ, իբր թե զու գերի ես ընկել, քեզ կծեծեմ, շան տուր կտամ, կովորես դիմանալ, մի երկու անգամ որ լավ ծեծեմ, կովորես, քեզ համար եմ ասում, որ զու կոիկ գնաս, զիրի ես ընկնելու, պարզ չե՞...»: Վա-

Հիկի անգույն աշքերը սարսափով լցվեցին: «Զենդ կտրի, — ասացի ես Սարգսին, — իմ հացը քեզ կտամ»: «Եվրոիկա, — Հանկարծ ձեռքը ճակատին խփեց Սարգսիը, — Վահիկ, ինձ ձետ արիս: «Ո՞ւր», — սարսափից քարացավ Վահիկը: «Մի դողա, — ծիծաղեց Սարգսիը, — զուգարանը ցույց տուր»: «Գնանք, Սարգ ջան», — միանգամից զվարթացավ Վահիկը և երկուսով միշանցը դուրս եկան: Քիչ անց Սարգսիը ետ եկավ, իսկ զուգարանի դուրս ներսից սկսեցին ծեծել՝ Վահիկն էր: «Տղերք, — ծղրտաց Սարգսիը, — դեղ ձեզ տեսնեմ, Հարձակվենք այս տան եղած-շեղածի վրա: Ով ինչ գտնի, իրենն է, թող ուտի, եթե կուղիք՝ իրար հետ փոխանակեք որոշ բան»: Մենք նայեցինք իրար, Կարոն փնթփնթաց քթի տակ, բայց, Համենայն դեպս, փակեց Երկրաշափության դասագիրքը. «Չէր խանգարի, եթե մի բան լիներ, ուտենք, — ասաց, — խնդիրները սովոր շեն սատկից»:

Կարոն, Ֆելիքսը զնացին խոհանոց, ես, Ռուբենը և Սարգսը սկսեցինք քրքրել սենյակի պահարանները: «Մուրաբա, — քիչ անց լսեցինք Կարոյի ձայնը, — սերկելի մուրաբա»: Լաց եկավ, որ իմ սիրած մուրաբան էր, տեսնես ես էլ մի բան կդուռնհմ, որ փոխանակեմ Կարոյի հետ: «Ցուզ, — լսեցի Սարգսի ձայնը, — երկու կիլ յուզ, ուտում եմ, ախ, երկու կիլ Հաց էլ լիներ»: «Կա, — մասյլ ասաց Ռուբենը, որ սեղանի դարակում մի մհծ կտոր Հաց էր գտել, — մի քիլ Հաց եմ տալիս, մի քիլ յուզ տուր»: Ես զնացի խոհանոց, Կարոն մուրաբա էր ուտում, իսկ Ֆելիքսը կարտոֆիլ էր գտել, բայց հում էր. դրել էր սեղանին ու մանրամասն, տիսուր նայում էր: Կարոն ինձ մի քիլ մուրաբա տվեց, Ֆելիքսին էլ: «Կարտոֆիլը խաշենք, — ասացի ես, — նավթավառի վրա մի բոպեռով կեփի»:

Զուգարանից լավում էին Վահիկի հուսահատ աղաղակները:

Մենք էին ուտելու ինչ-որ բան գտանք՝ շիր, մի կտոր պահնիր, փշատ, շորացած լավաշ:

Մենք ուտում էինք ողերդված, իսկ Վահիկը կամաց-կամաց սսկվեց: Ես մի քիլ վախեցա, երբ աղմկում էր, ովինչ, բայց որ լոեց, վախեցա: Մոտեցա զուգարանի դուանը. «Վահիկ, — ասացի, — Վահիկ, ձեն Հանիր»: «Առված եմ, — մրմնջաց Վահիկը, — ես էլ եմ սոված, համ էլ մամաս կծեծի»:

Ես բաց արի զուգարանի դուռը. «Առ, — ասացի, ձեռքիս Հաց ու պանիրը Վահիկին տալով, — կեր»: «Մուրաբա էլ եմ

ուղում, Հորաքովը էր ուղարկել Սարտաշատից, մամաս ասել էր՝ շուտես, ամբողջ ձմեռ թե կիմքենք դրանով...»:

Կարոն շէր հասցրել մուրաբայի ամանը մաքրապարզել, մեղ էլ մի քիլ մուրաբա տվեց, Սարգսը Վահիկին հաց ու յուղ միկնց, թեպետ շատ կուզեր, որ շվերցնի, բայց Վահիկը, պարզ է, վեցցրեց:

Մի խոսքով, մինչև երեկո ամեն ինչ կերանք: Տանն ինչ-որ գտանք, կերանք: Կերանք երանությամբ, ախորժակով, կատաղությամբ: Ավելի շատ՝ կատաղությամբ:

Հետո տիպեցինք:

Նստեցինք Վահիկինց աթոռին, թավալ տվինք փափուկ մահակալին, թախտին, տիսրեցինք:

• • •

Ես հիմա, շատ տարիներ անց՝ արդեն մինչև Հատակն եմ Հասկանում տիսրությունը: Ոչ, մենք շար շէինք, մենք բարի, մաքուր տղաներ էինք, և մեր արածը երեխ խաղ էր, պատերազմական դաման տարվա խաղ: Սարգսին, իհարկե, Հաջորդ օրը նորից հեռացրին դպրոցից, իսկ հետո հիվանդանոց տարան, որովհետև ստամբուխ շատ սուր խանգարում էր ստացել, մոտ մի կիլոգրամ յուզ կերավ, կատառակ եք անում: Ես ու Կարոն էլ ամոթից երկու օր դպրոց շեկանք, իսկ Ֆելիքսի և Ռուբենի անունները շտվինք, որ զոն միայն երեքս խայտառակվենք:

Հիմա ես նայում եմ Վահիկինց պատուհանի մետաղի շանցին, իսկ Վահիկը յոթ-ութ տարի առաջ մեռավ հոգեբուժարանում: Մենք՝ սոված-ծարավներս ապրեցինք, դիմացանք, իսկ նա կուշտ-կուշտ հոգեբուժարան ընկափ: Տարիներ առաջ, մի անգամ, տղաներով այցելեցինք Վահիկին, նրան տարանք ամենալավ խորտիկները, նաև սերկելի մուրաբա, մի մեծ ամանով: Վահիկին բերեցին զիխավոր բժշկի սենյակը, նա կարծիմ ճանաչեց մեզ, նույնիսկ ժամանակ ժամանակ մատաց: Նրանն ինչ-որ Հանդարտ Հիվանդություն էր, զիխավոր բժշկը բացարեց, Հիմա Հիվանդության անունը շեմ հիշում: Վահիկը նայեց-նայեց մեր տարած ուտելիթին, քթի տակ մեղմ ժպտաց, հիշեց ինչ-որ բան...

Այն օրը, երբ գուրս եկանք Հոգեբուժարանից, ամենատիտուրը Սարգսին էր:

Հիմա, երբ նայում եմ վահիկենց կույր պատուհանին, ամենատխուրը ես եմ:

Իսկ ամենատխուրը երևի բոլորով միասին ենք՝ մեր շապ-րած մանկությամբ:

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ

Ես ձեռքս բնազդով տանում եմ զանգին, բայց մի ուրիշ բնազդով էլ կոճակը չեմ սեղմում: Գուոք կողապած չէ, նույնիսկ ինձ թվում է, կիսաբաց է: Ես անաղմուկ բացում եմ դուռը, մտնում ներս: Վերջին պահին, հին սովորությամբ, աշըս ընկնում է պղնձե գեղին տախտակին. «Դարբին Պարթև Մանվելյան»: Ուստա Պարթևի հոգու հետ մենք շատ ենք խաղաղել այդ տախտակի համար, որ նա փակցրել է դռանը՝ մեր ծննդից բավական առաջ: «Այ պատ,— երբեմն բորբոքում էր Արմենի մեծ տղան՝ Վահեն,— էնպես էլ մի զրել ևս՝ դարբին, մեկն էլ կասի՝ ակադեմիկոս ես: Մեր գասարանցիները ձեռ են առնում»: Ուստա Պարթևը այդպիսի պահերին լուռ, խորամնկ ժամանում էր: Միայն մի անգամ, հիշում եմ, ասաց, «Աստամնաբոյժի շա՞փ էլ շկամ, փողոցի պատին են գրում իրենց անունը, ուսկե տառերով»: «Կարծես թե գարբնոցիդ դուռն է,— կրակը բորբոքում էր Վահեն,— ատամնացավը կարող է, չէ, հենց փողոցում բռնել, դրա համար են գրում: Իսկ դուն դարբին... Ա՞կ պիտի բերեն, սարքես, էշ՝ պիտի բերեն պայտես...»: Ես ներս եմ սահում անշշուկ, ինչ-որ փղձկոց դեմ է տուել կոկորդիս, իսկ պղնձե տախտակը մնում է դռան մշտականում: Խոհանոցից դուրս է գալիս Վահեն. «Տեսա՞ր ինչ արեց պապը, — նա ուզում է զապել տիրությունը, պատանեկան դեմքը ինձ սրված է թվում, աշքերի մեջ անսովոր մգություն կա, — նոր տարվա գիշերը հանուրս խմում էր»: «Գնաց ուստա Պարթևը, — շարքային մի նախադասություն եմ առուն ես, — հա՞մոդ ուր է...»: Վահեի ձեռքին ծխախոտ կա: «Գնաց պապս, — կրկնում է նա, հետո ասում, — Հորս շասիս: Գասարանի կեսը ծխում է: Աղջիկներն էլ»:

Ես ներս եմ մտնում Հյուրասենյակի: Ուստա Պարթևը զեռ մաճակալին է, երեկ ծածկված է եղիլ սպիտակ սավանով, մեկնումեկը ետ է քաշել, երկի տեսնելու համար հանգուցյալի

դեմքը, սավանը հիմա միայն ստքերն է ծածկում: Դեմքը հանգիստ է, տառապանքի ոչ մի հետք և, եթի ձեռքերը մեռնելավարի ծալած-դարսած վիճեին կրծքին, կարելի էր ենթադրել, որ պառկել է թախտին, հանգստանում է: Ես նայում եմ դարբնի մեծ, արդար ձեռքերին, որ սպանված-ընկած են նրա լայն, ուռուցիկ կրծքին, այդ ձեռքերն ինձ հոգնատանց գինվորներ են թվում, որ տառապալից երթի ժամանակ՝ դադարի ազդանշանը լսելով, վայրկենապես հնձված ցորենի պես գետին են տապալվում ու քնում վայրկենապես: Հետո, երբ վերկացի ազդանշանը լինի, նրանք նաև կարթնանան վայրկենապես: Ինչո՞ւ եմ հանկարծ դա պատկերացնում, զփիտեմ: «Մինչև զանգահարեցին, աեղ հասա, զփակցությունը կորցրել էր, — Արմենն է, նստած է հին բազմոցին, ասես բազմոցին թափված փշրված ապակի լինի, — գնաց ուստա Պարթև...»:

Ես նստում եմ Արմենի կողքին, հին բազմոցն ավելի է փոս ընկնում, հոգնատանց զսպանակներն արդեն վազուց արել են իրենց գործը, մեռնել են ուզում, իմ մեջ արթնացող տարրական այս նախադասությունները զգայնացնում են ինձ, որովհետեւ ես ուրիշ բառեր եմ որոնում:

Ես շատ իմ ուզում միսիթարության փափուկ, չգործածված բառեր գտնել ընկերոցս համար, ես չեմ ուզում հիմար բաներ կմկմալ, թե ոչինչ, հայրդ ութսուներու տարի ապրեց, զավակներին հասցրեց իրենց նպատակին, թուներ տեսավ, ազնիվու արդար ապրեց և այն ենման բաներ: Ուրիշ բառեր, սակայն, չեմ գտնում և պարզապես կուլ իմ զալիս ընկերոցս կողքին, հին բազմոցի վրա:

Եվ հանկարծ, զփիտեմ ինչու, նրան ուզում եմ պատմել Հորս մասին, իմ հոր մասին, որին նա չի տեսել, որին ես ինքս հազիվ եմ հիշում:

Թուրոր այս տարիներին ես չեմ փորձել հորս մասին գրել, որովհետեւ վախեցել եմ, թե կհորինեմ նրան: Իսկ ես ուզում եմ, որ հայրս իմ մեջ ապրի մաքուր, անխաթար՝ ինչպես մարդարաւահատիկը խեցու մեջ, ինչպես վիշտը՝ մոր սրտում, և որ նրան մտարերելը լինի բնական՝ ինչպես զուր խմելու ցանկությունը, ինչպես հազը...»

Հա՞յրս...

Հայրս սիրում էր ինձ զնիկը իր ուսերին, ես դա, իրոք, հիշում եմ, աշխարհն առաջին անգամ ես հայտնագործել իմ

նրա ուսերից: Դրանից առաջ, երբ մեկ-երկու ամսական եմ եղել, կապույտ հազ և մ ընկել, մի քանի անգամ հասել այն աշխարհի սահմանագլխին: Միակը, որ հավատացել է, թե կապրեմ, Հայրս է եղել, ևս ուա, հասկանալի է, չեմ հիշում, ինձ պատմել են: «Երիխայի հոգին ետ ևս բերում,— պառավները նախատել են հորս,— փոխանակ Սաժումյանին կանչելու, տերուեր կանչիր»: Բայց Հայրս Սաժումյանին է կանչել, որ մեր գյուղի միակ բժիշկն էր, և ժամերով, օրերով պահել է ինձ ծեռքերի վրա, մինչև Հազն անցել է, որմբիս կապույտը մեղմացել (կապույտ հազ, ի՞նչ սիրուն անուն է, չէ՞...):

Հորս աշքերը կապույտ էին... Ասես երկու կտոր ամպ երկնից լողացել-եկել էին հորս հոնքերի տակ ու որոշել էին (ամպերը՝ որոշել էի՞ն...) այլևս երկինք չվերադառնալ...

— Ուստա Պարթեփ աշքերն ի՞նչ գույնի էին,— հարցնում եմ հանկարծ, տեղուուեղն էլ ամաշելով իմ հարցից:

— Խաժ, — չի զարմանում ընկերս, — խաժ...

— Բարի էին,— ուրախանում եմ, որ գտնում եմ փափուկ մի բառ, — քառասուն տարի թեժ կրակին նայած դարբնի աշքերը ո՞նց էին այդպես բարի մնացել, — իսկապես, մի՞թե բարությունը գույն չէ, — քառասուն տարի նայել է կրակին...

— Կրակը շար չէ, — ասում է ընկերս:

— Նայած կրակ, — ասում եմ ևս, — ծխախոտ տուր:

— Հորս մոտ չեմ ծխում, — ասում է ընկերս. ոչ, նա սենտիմենտալ բառախաղ չի անում, նա զիտե, որ քիչ հեռու, մահճակալին պակած Հայրն այլևս չի արթնանա: Բայց մեռած Հայրը մի՞թե կրկնակի հայր չէ:

Իմ Հայրը չէր ծխում:

Թի՞ ծխում էր:

Հորիցս մնացած ամենավառ հիշողությունս՝ նա մեզ երբեք չէր ծննդում, ոչ եղբայրներիս, ոչ քորոշ, ոչ էլ, մանավանդ, ինձ: Երբ վատ բան էինք անում, Հայրս խոռվում էր մեզնից, այո՛, այո, խոռվում էր երեխավարի, ինչպես հասակակիցը հասակացից: Անասելի փիրուն տիրությամբ եմ ևս մտաբերում հիմա, և հորս խոռվելը մեծագույն պատիժն է, որ կյանքում ևս կրել եմ երբեք: Ուստա Պարթեփ մինչև երեկ իր որդուն, որ քառասունյոթ տարեկան է, խորհուրդներ էր տալիս՝ հատիկ-հատիկ, իսկ որդին նրա առաջ հաշվետու էր իր կյանքի բոլոր ծալքերի, մանրութների համար, հաշվետու էր

ամեն ինչում, թեպիս որդին պատմաբան է, հայրը՝ դարբին: Սենյակը, միջանցքը խտանում է մարդկանցով, խոհանոցում նստած, կանգնած, պատին հենված՝ մի քանի տարեց մարդ կա, ուստա Պարթեփ ընկերները, որոնք մի շաբաթ առաջ նրա հետ նարդի էին խաղում, երեկվա պես վերջիշում քան թվականի դեպքերը իրենց ապրած կյանքի քառակուսի տեսրակում, քառակուսիներից մեկի մեջ զաղը նրանք կտեղավորեն նաև ուստա Պարթեփն, ինչպես-նրանից առաջ՝ իրենց ուրիշ ընկերների, մինչև որ, մինչև որ... խաչ-խաչ կլրացվեն կյանք-տետրակի բոլոր քառակուսիները, մինչև որ այլս հիշող չի մնա, քառակուսու մեջ խաչ դնող չի մնա: Սենյակներում ավելի շատ երիտասարդներ են՝ ուստա Պարթեփ որդիների և թռոների ընկերները, և առաջին անգամն է, որ դարբինը պակած է մնացել՝ այսքան մարդու ներկայությամբ: Քիչ հետո դագաղը կրերեն, նրան հիացցնեն իր ամենալավ շորերը, մենք դեռագույն զգուշությամբ կվերցնենք նրան մահճակալից, կդնենք դագաղի մեջ, կտեղավորենք մի կերպ, որովհետեւ գագաղը նեղ կլինի, հետո, երկի առաջին անգամ, նրան ծաղկիներ կնվիրենք, ծաղկիներ կդնենք դարբինի ուրբերի տակ, կրծքին...

— Տեղ հասա, զի՞ն շնչում էր, — Արմենը այդ պատմում է արդեն երրորդ անգամ, բայց ևս նայում եմ ուշագիր, — բան ասաց ինձ, շհասկացա, ի՞նչ ասաց...

— Ոչինչ, — ասում եմ, — քառասունյոթ տարի զու լսել ես նրա բոլոր բառերը, վերջինը նույն այդ բառերից մենքումներ պետք է լիներ, ոչինչ...

Հետո լուսմ եմ հանկարծ, շեմ ուզում շարունակել, որ ևս, օրինակ, Հորս բառերից ոչինչ շունեմ իմ մեջ, որ ևս նույնիսկ շեմ էլ տիսել, թե նա ինչպես փակեց աշքերը, որ բաց կապույտ էին:

Հայրս ինձ համար երբեմն ոտանավորներ էր ասում: Նա շատ ոտանավորներ գիտեր: Անգիր էր ասում: Հետո, երբ մեծացած, մայրս պատմում էր, որ նա «գարասկոն» է ավարտել, իսկ հետո, երբ ավելի մեծացած, ի վերջո, վերծանեցի, որ «գարասկո»-ն ուսւերեն «городекое» բառն է, որ Հայրս, ուրեմբն, ավարտել է Ալեքսանդրապոլի քաղաքացին ուսումնարանը: Դա այն ժամանակների համար լուրջ կրթություն էր: Հորս զարդներները մտավորական դարձան՝ ուսուցիչ, փաստաբան, մեկը նույնիսկ հետազոտում ժողով-կեռնի դրքերը թարգմանեց, իսկ նաև վերադարձավ մեր զյուղը, իր խաղողի

այցիներին: «Որ հերդ խելք ունենար,— մինչև հիմա էլ դառնանում է մայրս,— որ ձեր հերը բան հասկանար աշխարհցից, հետ չեր զա էս քամբախը, — «քամբախ»-ը մեր գյուղն է, — զլուփը լիբը խելք՝ ուշը զնում էր մի պազունց հողի համար: (Մայրս միշտ մոռանում էր, որ եթի հայրս քաղաքում մնար, երեխ չեր հանդիպի իրեն, այդ գեղքում ո՞վ կլինեինք մինք...): Բայց ոտանավորներն ապրեցին հորս մէջ, և նա սիրում էր ինձ համար անգիր ասել հայերեն, ոռուերեն: Բայց ամենից շատ հայրս աշխարհազրություն էր սիրում: Մեր տանը մեծ սենյակի պատին, ծաղկանկար գորգի փոխարեն, կպցրած էր աշխարհի մեծ, գունավոր քարտեզը: Ես երկու-երեք տարեկան էի, երբ հայրս ինձ սկսեց սովորեցնել ծովերի, քաղաքների, երկրների ու աշխարհամասերի անունները: Ես բավական քնողնակ զուրս եկա այդ գծով, ու երբ մեր տունը մարդ էր գալիս, ինձ թցնում էին աթոռին, ինձնից ավելի երկար ձողափայտը ձեռքս տալիս, ու ես իմ հերթական շուրջերկրյա հանապարհորդությանն էի զուրս գալիս: Այդ ժամանակ ես շփտեի, որ տարիներ անց ինձ բախտ է վիճակվելու իսկապես լինել այդ քաղաքներում, նայել այդ ծովերին, թոշել այդ աշխարհամասերի վրայով... Բայց երեկ այն ժամանակ ավելի լավ էր ճանապարհորդելը, երբ անարգել թոշում-անցնում էի երկրների ու օվկիանոսի վրայով, վիզայի չեի սպասում, մաքսատանը թուղթ չեի ստորագրում այն մասին, որ ճամպրուկիս մէջ ատոմային ոռում կամ թանկարժեք քարեր չիմ տանում... Մեր տան միամիտ, բարի հյուրերը լուս էին, ապշում, թի ինչպես եմ արտասանում Սան-Ֆրանցիսկո, Կոպենհագեն, Նեղոս և ուրիշ զնուն անուններ, հյուրերը հավատում էին, թի աշխարհին մեծ մարդիկ տված մեր գյուղը կտա նաև մեծ ճանապարհորդ՝ աշտարակցի Մագելլան կամ Միկուլսո-Մակլայ: Իսկ հայրս, Ալեքսանդրապոլի ուսումնարանն ավարտելուց հետո, այզպէս էլ զուրս չեկավ մեր գյուղից, թեպետ ես հիշում եմ, նա այնպես զունագեղ էր պատմում այդ անհայտ, հեռավոր երկրների ու ծովերի մասին, որ հիմա՝ այդ երկրներն ու ծովերը տեսնելուց հետո էլ ես չեմ կարող:

Բայց ես արգեն սկսում եմ հորինել հորս...

— Արմեն, հայրդ քեզ ծեծած կա՞:

— Մի անդամ, — Արմենը լուս է, նա չի ասում ինչի համար, — ժանը ծեռք ուներ:

— Դարբնի ծեռք է:

Հորս ծեռքերը փափուկ էին, կարճ, սպիտակ մատներով: Նա մեզ բոլորովին չէր ծեծում, ես արդեն ասել եմ, խոռովով էր մեզնից: Մի բանի տարի էլ կանցնի և, եթե ես այդքան ապրեմ, մենք հորս հետ արդեն հասակակից կդառնանք: Եթե զրասեղանի վերևում ես կպցրել եմ հորս մեծացրած նկարը, խմբական մի նկարից՝ առանձնացրի, խունացած նկար էր, գույները մարել էին: Հայրս զիւարկով է, վերարկուն հագին, հորաքուլերիս և էլի ինչ-որ բարեկամների, երիխաների մեծ խմբի հետ: Գեմքը մազակալած է, բայց աշքերի մէջ զարմանալի փիրուն մի բան կա, միամիտ մի բարություն: Այզպիսի հայացք մեր տանը հիմա միայն կիլիթն ունի, աղցիկս, որ ծնված է 1973 թ.-ին: Հորս մեծացրած նկարը ես տվի ծանոթ մի նկարչի, խնդրեցի, որ արտանկարե՛՝ մեր գյուղի հին կամրջի ֆոնին (հայրս շատ էր սիրում այդ կամրջը, ինձ շալակում, տանում էր ջրաղացը, նստում էինք Արլորաքարին): Նկարելը նկարեց, ամեն ինչ տեղը-տեղին, բայց նկարում հայրս չէր. մեր հին կամրջի ֆոնին նստած էր հասարակ ու շար մի մարդ՝ հորս գրիմով: Նկարելը ինչպես պիտի բռներ հորս աշքերի բարության գույնը (բարությունը գույն ունի՞): Մայրս պատմում է, որ երբ մեր տանը լավ ուտելիք էր լինում, և հայրս տրամադրվում էր մի բանի բաժակ գինի խմելու և, պատահաբար, տանը հյուր չէր լինում, զուրս էր գալիս, նստում մեր զռան ուտենու տակ, մինչեւ որ ժանոթ մարդ էր հանդիպում, համազում, հրավիրում էր նրան տուն:

Արմենին կանչում են կողքի սենյակ, այսինքն՝ խոհանոց: Արմենի հորեղբոր տղան է, զերեղմանատնից է գալիս. բանի որ գետինը սառած է, զերեղմանափորները հարյուր հիսուն ուուրլի են ուզել, ամառ ժամանակ յոթանասուն-ութսուն ուուրլով են փորում: Արմենը դառը քմծիծաղ է տալիս, իսկ ես հանկարծ հիշում եմ ուստա Փարթեկի ծեռքերը՝ մեծ, ծանր, արդար ծեռքերը: «Եվ գետինն է սառած, — ասում եմ, — և, որքան գիտեմ, այդ զերեղմանատնը հողը քարոտ է, ավելի շատ քար է, քան հող...»: Հետո մենք նստում, իրար լրացնելով շարագրում ենք ուստա Փարթեկի կենսագրությունը, միջնորդել հնագագային թերթը զուցը մահախոսական տպի: Փարթե ներսին Մանվելյանի կենսագրությունը տեղափոխում է աշակերտական տեսրի թղթի մի երեսին, պատվոգրեր ունի, մե-

դալներ ունի, շքանշան շունի... եվ իբրև ողջ կյանքի հանրապետամար՝ սովորական, կենսագրական մի տեղեկություն. «Քառասունյոթ տարի աշխատել է իբրև դարբին»: Շքանշան շունի, մի անգամ եղել է քաղլսործոփի գեպուտատ...»

...Հնում, շատ հնում, տասու է պատմել, մեր գյուղում ապրելիս է եղել մի մարդ, հարուստ, գոռոզ մի մարդ: Գյուղի հարսանիքներին, երբ կանչում էին, և թաղումներին, որ պիտի գնար առանց կանչելու, այդ մարդը ինքը չէր գնում, այլ ուղարկում էր իր... կոշիկները: Այս, այս, կոշիկները՝ ինքը չէր գնում, ուղարկում էր կոշիկները: Գյուղացիք բարի ու անօգնական մարդիկ էին, այդ մարդը հարուստ էր և ուժեղ, և գյուղացիք նրա կոշիկները տանում-դնում էին պատվավոր տեղ՝ հարս ու փեսային մոտիկ, կամ հանգուցյալի դագաղին մոտիկ: Բայց եղավ մի օր, որ մեռավ նաև այդ մարդը, որը հարուստ էր ու շար (հարուստ ու շար մարդիկ էլ, լավ է, որ գոնե մեռնում են), մեռավ և նրա դագաղի մոտ՝ մհձ, լուսավոր հյուրասահում, մեկ-երկու ազգականի կողքին՝ հերթով, իրար հետեւց եկան, շարքեցին գյուղի բոլոր... կոշիկները Գյուղացիք բարի էին և անօգնական, բայց նրանց հոգին փխրուն էր, իսկ փխրուն հոգիների վերքը ուշ է սպիանում: Այդ մարդը երեխա էլ շուներ, կին ուներ, որ ավելի վաղ էր մեռել, և նրա դագաղը դժվարությամբ կտրեցին գետնից, որովհետեւ կոշիկները, պարզ է, ձեռքեր շունեն և այդ մեկ-երկու ազգականն էլ մի քանի բռպի տանելուց հետո դագաղը սայլին դրին, որովհետեւ անկարող էին մինչև գերեզմանատուն հասցնել, իսկ գյուղի կոշիկները բռլորն էլ տանը մնացին, որովհետեւ այդ կոշիկների մեջ ոտքեր շկային, որովհետեւ այդ կոշիկների տերերը մնացին էին իրենց տներում՝ առաջին անգամ խախտելով գյուղի սուրբ ավանդությունը:

Ես հանկարծ այդ պատմությունն եմ մտաբերում, իսկ գըրսում ձյուն է գալիս՝ մարուր, փափուկ փաթիլներով, ևս հանկարծ, հազի պես անդիմադրելի, հիշում եմ հորս, որ 1937 թվականին, հալկական փոքրիկ գյուղում, իր վեց տարեկան որդու համար անգիր էր ասում Տյուտեկի բանաստեղծությունը (երեկ սա. «Զգիտեմ, մի օր ուրախ կլինի՞ իմ հոգին հիվանդ ու մենակ»): Տիրում եմ կողքի սենյակում հանգստացող դարբին-հոր համար, պատերազմի անհայտ դաշտերում ցորենի հատիկների փոխված միլիոնավոր անանուն մեր հայրերի

համար, տիրում եմ հորս համար, որ շհասցրեց տեսնել անգամ, թե ինչպես եմ զրում «ա» տառը, տիրում եմ ընկերոջս համար, որի աղջիկը կամուսնանա՝ առանց նրա կամքքը հարցնելու, տիրում եմ ինձ համար, որ շմ էլ հասցնի տեսնել, ինչպես է կիլիթն ամուսնում, հասկանալի է՝ նույնպես առանց իմ կամքքը հարցնելու...»

...Հորս տանում էին հազար ինը հարյուր երեսունութ թվականի աշնան միջով, իսկ ինձ գեռ նախորդ օրը ուղարկել էին հարեւանի տուն: Ես այդ ժամանակ շփոտեի, թե ի՞նչ է մահք, ևս զիջձ էի ուտում մեր հարեւանի պարտեզում, բայց գուգուկի ձայնը ինձ փողոց կանչեց: Այդ տարիներին փողոցում նվազում էին միայն, երբ... մարդ էր մեռնում: Ես փողոց փախա, տեսա հորս՝ ամպերի մեջ, տեսա մորս, եղրայրներիս, հորաքույրերիս, մեր բարեկամներին, շատ գյուղացիների: Կանայք ինձ իրենց մեջ առան, երևի բոլորը «իսեղճ որը, խեղճ երեխա» շշնչացին, իսկ գուգուկները օդը լցրել էին անիրական, հերթաթային տիրությամբ: Հիմա, տարիների ուոժի միջից, ևս պարզ-պարզ տեսնում եմ, որ այն ժամանակ ձեռքերը չէ, որ տանում էին հորս դագաղը, հայրս, այս՝ լողում-սահում էր գուգուկների նվազի մաքուր, արդար ալիքների վրայով...

— Ծխիր,— ասում է ընկերս, — կյանք է, ի՞նչ պիտի անես, — իր հոր դագաղի մոտ նա հանկարծ ինքն է միսիթարանքի բառեր բնտրում ինձ համար, — ծխիր,— ասում է, — ևս էլ որբացա, հավասարվեցինք: Սովոր կարգին ներս քաշե՛ր, որ ծովսր ներս է գնում, հանգստացնում է:

## ԽՄ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԽՍՂԱԼԻՔԸ

Նրանք քայլում էին մոխրագույն շարքերով: Քայլում էին լուս, կենարոնացած: Ինձ թվում էր, որ նրանք բոլորն էլ իրար նման են, շատ նման: Նրանք չէին նայում մեզ, երբ անցնում էին, և ևս չէի կարողանում տեսնել նրանց աշքերը: Իսկ ևս շատ էի ուղում տեսնել, շփոտեմ ինչու: Ճիշտ է, ևս գիտեի, որ նրանք գերմանացիներ են, բայց նրանք հո աշքեր ունե՞ն... «Ինչո՞ւ չեն նայում մեզ», — մի անգամ հարցրի մորս, երբ նրանք սովորականի պի: անցնում էին մեր փողոցով: Մայրս պատասխանի գոյարեն, շանչեց նրանց կողմը և ինձ կրծքին

սեղմելով շշնչաց. «Արմենին նրանք են սպանել»: Արմենը մորաբրոջ տղան էր, որին ևս շատ էի սիրում: «Նրանցից ո՞րը,— հարցրի ես:

Ուզում էի ասել, թե նրանցից ո՞րն է սպանել Արմենին: Բոլորը, — պատասխաննեց մայրս: Ես այլևս հարց չտվի, թեև չկարողացա հասկանալ, թե բոլորով ինչպես կարող են սպանել մենքն:

Իսկ շաբքերը շարունակում էին անցնել:

Ես չեմ տեսնում նրանց աշքերը:

Յոթ-ութ տարեկան էի:

Պատերազմ էր...

Այդ օրվանից հետո ես ավելի ուշադիր էի նայում մոխրագույն շաբքերին, որոնք սպանել էին մորաբրոջ տղային. ուզում էի գտնել նրանց, հատկապես այն մեկին: Ես չեմ հավատում, թե Արմենին սպանել են բոլորը: Դա միայն մեկը կարող էր լինել: Հարկավոր էր գտնել այդ մեկին: Այդ օրվանից սկսած ես ավելի խնամքով էի պահում իմ հրացանը, որը կարող էր պիտք գալ: Իսկ երբ բակում կոփի էինք խաղում, ես այլևս չեմ համաձայնվում գերմանացի լինել, ես չեմ կարող սպանել Արմենին:

Գերմանացիները սալահատակում էին մեր փողոցը: Նրանք սկսել էին վերեկից և մի օր էլ արդեն մեր տան մոտ էին: Ու ես ստիպված ամեն օր պետք է նրանց նայեի: Դա լավ էր. ես այդպես կարող էի գտնել նրան, թեպես չգիտեի, թե ինչ պետք է ճանաչեմ:

Աշխատելու ժամանակ գերմանացիները երեխն խոսում էին իրար հետ, մի անգամ էլ տեսա, որ երկու հոգի նույնիսկ ծիծաղում են: Նրանցից մեկի աշքերը կապույտ էին՝ ինչպես Արմենի աշքերը: Շատ բարի զեմք ուներ. նա չէր կարող սպանած լինել: Դրա համար էլ, երբ հաջորդ օրը տեսա, որ նա աշքի տակով ինձ է նայում, մոտեցա և իմ ձեռքի խաղողը տվի նրան: Նա ժամանակ շատ հաջորդ օրը տեսա, որ նա աշքի տակով ինձ է նայում, մոտեցա և իմ ձեռքի խաղողը տվի նրան: Ես ժամանակ շատ հաջորդ օրը տեսա, որ նա աշքի տակով ինձ է նայում, մոտեցա և իմ ձեռքի խաղողը տվի նրան: Ես ժամանակ շատ հաջորդ օրը տեսա, որ նա աշքի տակով ինձ է նայում, մոտեցա և իմ ձեռքի խաղողը տվի նրան: Ես ժամանակ շատ հաջորդ օրը տեսա, որ նա աշքի տակով ինձ է նայում, մոտեցա և իմ ձեռքի խաղողը տվի նրան:

— Ինչո՞ւ խաղողը տվիր ֆաշիստին, — բռունքըները սեղմած մոտիկ եկավ կարենը, որ ինձնից երկու տարով մեծ էր:

Հենց այդ ժամանակ մեր սենյակից դուրս եկավ մայրս:

— Ինչո՞ւ եք կովում, — ասաց նա: — Խաղողը ֆաշիստին տվեց: Մայրս զարմացած ու տիսուր նայեց ինձ, բայց ոչինչ շասաց: — Տիսա՞ր, — ասացի Կարենին: Կարենը ատամները կրծտացրեց: — Ես նրանց բոլորին կսպանեմ:

Հաջորդ օրը այդ երկուսը նորից մեր դռան մոտ էին: Երբ ես գուրս եկա, նրանք ժպտացին և ծեռքով արին ինձ: Զգիտեմ ինչու՝ ես էլ ժպտացի: Հետո հանկարծ հիշեցի Արմենին ու նորից բակ մտա: Ես այն ժամանակ զեռ լավ չեմ պատերացնում, թե ինչ է նշանակում սպանել: Բակում, երբ մենք սպանում էինք իրար, քիչ հետո անմիջապես վեր էինք կենու, մտածեցի ես, ու սիրոս տիրեց: Վերեւում շատ կապույտ երկինքն էր, իսկ բակում մայրս լվացք էր փոռում:

— Մամա, — ասացի ես, — Արմենը էլ չի գա մեր տուն...

Մորս աշքերը տիսուր էին: Նա նայեց ինձ, բայց ոչինչ շասաց և շարունակեց լվացք փոել: Լվացքը երկնքի նման կապույտ էր:

— Լողակը շատ եմ արել, — կարծես լսելով, թե ինչ եմ մտածում, կամաց ինքն իրեն ասաց մայրս, և ես տեսա, որ նա լաց է լինում:

Ինչո՞ւ, ի՞նչ անենք, որ լողակ շատ է զցել, զրա համար ի՞նչ կարիք կա լաց լինել: Այ, ես կմեծանամ ու շատ, շատ սպիտակ կտոր կառնեմ ու քիչ լողակ: Որ շորերը շկապտեն: Ես իմ մտածածի մասին ասում եմ մորս, իսկ նա մոտիկ է քաշում ինձ, համբուրում աշքերս:

— Արմենը քեզ շատ էր սիրում:

— Ես կպտնեմ Արմենին սպանողին, — ասացի ես, — կպտնեմ ու կսպանեմ Կարենի հետ, նա համաձայն է...

Ես փողոց վազեցի: Մոխրագույն մարգիկ այնտեղ էին: Այն երկուսն էլ: Հանկարծ ես տեսա, որ նրանք ինձ են կանչում: Գնա՞լ, իսկ զուցե նրանք իմացել են Արմենին սպանողի անունը, դրա՞ համար են կանչում... Բայց չի որ ես նրանց շեմ ասել: Իսկ եթե նրանք հանկարծ խարեն, և ես ու կարենը ուրիշ գերմանացու սպանենք: Նրանք նայում են ինձ, կանչում: Ճար չկա, մոտենում եմ: Երկու գերմանացին էլ կարճահասակ են, բայց նման չեն իրար. մեկը կապույտ

աշքեր ունի, իսկ մյուսը ակնոց է դրել՝ հաստ ապակիներով։ Նրանք խռում են իրար հետ, ապա ակնոցավորը ժողից հանում է թղթի մեջ փաթաթած ինչ-որ բան և տալիս ինձ։ Ես շտապ բաց եմ անում, ատրճանակ… Փայտն տիկնիկ է՝ կարմիր աշքերով, կարծես թե լաց է եղել։ Դունավոր շորեր ունի՝ մատիտով ներկած։ Ես զարմացած նայում եմ խաղալիքին ու շփառմ ինչ անհիմ, իսկ նրանք հասկացնում են, թե տիկնիկը ինձ են տալիս։ Վիրավորանքից քիչ է մնում լաց լինեմ. որից բան, եթե ատրճանակ կամ ջրացան տային։ Տիկնիկ… լավ է գոնե, որ Կարենը շի տեսնում, թե շէ բոլորին կպատմի։ Գերմանացիները շարունակ ժպտում, ինչ-որ բան են ուզում հասկացնել ինձ, ու ես տիկնիկը վերցնում եմ։ «Դե լավ, — մտածում եմ, — Հասմիկին կտամ, իսկ նա թող Կարենի ատրճանակը թաքուն բերի ինձ»։ Տիկնիկը գրպանս եմ դնում և գնում բակ։ Ոչ ոք չկա։ Ավելի ուշադիր եմ նայում, փայտից է, դանակով փորել են, կոկել, ձև տվել… շատ ամուր փայտ է։

— Այդ ի՞նչ է, — լսում եմ հանկարծ։

Մայրս է։

— Նրանք տվին։

Մայրս վերցնում է տիկնիկը, ուշադիր նայում։ Նրա աշքերը տիտուր են ավելի։ Հետո ասում է.

— Տանը դեղձ կա, չէ՞…

— Կա։

Ես վազում եմ տում, վերցնում երեք հատ դեղձ ու նորից փողոց գուրս գալիս։ Նայում եմ մոխրագույն շարքերին։ Ռուր գնացին այն երկուսը։ Վախենում եմ փողոցով ներքև իշնել, մայրս կբարկանա։ Լավ, — մտածում եմ, — վաղը կտամ, — և ուսում եմ դեղձերից մեկը։ Հետո տիբում եմ. ո՞ւր գնացած կլինեն։ Հեռվից բոլոր գերմանացիները նման են իրար, նրանցից ոչ մեկի աշքերի գույնը շի երևում, իսկ ակնոցավորներ շատ կան։ Ես նորից եմ վերադառնում ու, շգիտեմ ինչո՞ւ հանկարծ տիբում եմ։ Հետո մտածում եմ՝ իսկ ինչո՞ւ տիկնիկը տամ։ Հասմիկին։ Չեմ տա։

Այն երկուսին ես այլևս չգտա։ Հաջորդ օրերին էլ փնտրեցի, իսկ Հետո պատերազմը վերջացավ։ Մեր փողոցն արդեն լրիվ սալահատակած էր, իսկ մոխրագույն շարքերն այլևս չերևացին։

Մնաց փայտե խաղալիքը՝ զարմացած, կարմիր աշքերով։ Ես մի օր տեսա, որ նրանք պարզապես բալի կորիզներ են դրել աշքերի փոխարեն։

Զ Զ Զ

Այդ տիկնիկը եղավ իմ ամենավերջին խաղալիքը, որով ես երբեք շվաղացի։ Պատերազմի հետ վերջացավ նաև իմ մանկությունը։ Մանկությունը պաղպաղակի նման է՝ սառը, քաղցր ու հաճելի։ Ուզում ես ուտել, չես ուզում վերջանա։ Մենք շատ շուտ մեծացանք և տասնչորս տարեկանում արդեն տասնյոթ տարեկան էինք։ Հետո խաղաղությունը սովորական դարձավ, և մենք սկսեցինք մեծանալ՝ արգելն ըստ օրացույցի և ծննդյան թվերի։ Եվ ահա ես քսանցինք տարեկան եմ, ու գնացք ինձ տանում է Գերմանիայով։ Զգիտեմ ինչու, ճանապարհ ընկնիլս, վերջին բողեին ես ինձ հետ վերցրի նաև այն փայտե տիկնիկը…

Գնացքում մենք նստած ենք տեղացի ուղևորների հետ, որոնք շատ արագ փոխվում են։ Ահա ներս մտավ մեկը՝ ակնոցավոր, ճաղատ։ Նստեց իմ դիմաց, նայում ենք իրար։ Տանշված դիմք ունի։ Հանկարծ նա հարցնում է բավականին մոտիկ ուսւերինով։

— Ո՞ւր հք գնում։

— Բելգիա։

— Ռուսաստանի ո՞ր մասից եք։

— Կովկասից։

— Կովկասից, — մարզը ժպտում է, հետո հանում է ակնոցը, և հս տեսնում եմ, որ նրա աշքերն իրոք կապուտ են, — ես եղել եմ Կովկասում, քառասունշորս թվականին…

Ես լայն բացում եմ աշքերս, ապա արագ մոտենում ճամպրուկիս, հանում փայտե տիկնիկը, գրպանս դնում։ Իսկ մարզը շարունակում է խոսել։

— Լավ մարդիկ շատ կան ձեր կողմերում։ Հիշում եմ՝ երեխաները մեզ հաց, միրգ էին տալիս, իսկ ծնողները չէին արգելում։

Մի՞թե նա է։ Դե իհարկե, նույն ակնոցն է, ճակատը, որն ամամակ շատ քրտնած էր, ինչպես հիմա՝ շոգից։

— Մենք չգիտեինք ինչպես շնորհակալ լինել երեխաներից

և հիշում եմ՝ զանազան խաղալիքներ էինք սարքում հացի խմութից, փայտից:

Նա է, դե իհարկե: Ես արագ հանում եմ բալե աշքերով տիկենիկը:

— Չե՞ք հիշում, — հարցնում եմ ես, — չե՞ք հիշում...

Մարդը նորից գնում է ակնոցը, ուշագիր զնոնում տիկնիկը, որը կարծես թե նույնպես ակնոց է դրել՝ միայն թե կարմիր ապակիներով:

— Հիշո՞ւմ եք, — շարունակում եմ ես, — դուք մեր փողոց էիք սալահատակում, երկուսով էիք, ես ձեզ խաղող տվի, հետո ուզում էի դեղա տալ, բայց ձեզ կորցրի...

Մարդը նայում է փոքր-ինչ շփոթված և շատ ուշագիր աշքերով: Նախ տիկնիկին է նայում, հետո՝ ինձ: Երկի դժվարությամբ է վերճիշում, չէ՞ որ այն ժամանակ ես յոթ տարեկան էի:

— Մի՞թե Հայաստանը շեք հիշում, — շարունակում եմ ես, — դուք անցնում էիք մոխրագույն շարքերով և իրար շատ նման էիք...

— Ես Հայաստանում չեմ եղել: Մենք Կովկասի ուրիշ քաղաքում էինք...

\*\*\*

✓ Գնացքը գնում է նույն մոլեգնությամբ, վագոնի քառակուսի լուսամուտի մեջ անբնդհատ փոփոխվում են բնության, մարդկանց ու քաղաքների պատկերները: Իսկ իմ ու զերմանացու արանքում, փոքրիկ սեղանի վրա զարմացած, կարմիր աշքերով կանգնած է փայտի տիկնիկը: Իմ ամենավերջին խաղալքը:

## ՄԵՐ ԹԹԵՆԻՆ

Իմ ընկերող՝ Վարուժանի որդին երկու պապ ունի, երկու տատ, երեք բնակարան (հոր բնակարանը՝ մեկ, մորական տատուպապինը՝ երկու, հորական տատուպապինը՝ երեք): Յուրաքանչյուր բնակարանում նա ունի մեկական հեծանիվ, մեկական հոլ, խաղալիքներ, զգեստներ, ամեն ինչ: Իսկ հորը,

այսինքն, Վարուժանին՝ տեսնում է տարին մեկ: Ընկերս բաժանէ ապրում կնոջից, իր ծնողներից հոգնել է, ատում է կնոջ ծնողներին:

Տարին մեկ նա հանկարծ մտաբերում է ինձ: Գալիս է առանց զանգ տալու: Գալիս է, սովորաբար, իմ աշխատանքի տեղը: Տուն չի գալիս: Տանը իմ երեխաներն են, որոնք երկուսով ունեն մի հեծանիվ, բնդհանուր խաղալիքներ և ընդամենը... մի տատ:

Եթե նա ինձ չի գտնում աշխատանքի տեղում, ուրեմն կգա և մի տարի անց:

Այսօր նա գտել է ինձ:

Ես քարտուղարուհուն խնդրել եմ ինձ մոտ մարդ չթողնել, և մենք դատարկում ենք սուրբի յոթերորդ բաժակը:

Վարուժանը հանկարծ հիշել է մեր գյուղի թթենին:

Երբ ներս մտավ, բարեկց, ասաց, որ շուկայից է գալիս, հետո կաշվե պայտապակից հանեց, իմ գրասեղանին շարեց յոթություններու:

— Նայիր, բայց ուտելու բան չի, — ասաց:

Ողորկ, մեր մանկության շարխաքաշ հոլերի նման խնձորները նա հասակի կարգով շարեց իմ թթերի մեջ:

— Առողջ խնձորներ են, չէ՞՝, ասաց, — մի փշացած կետ չկա, որդնած էլ չեն: Քիմիայի մեջ որդ կապրի՞ո: Որդը հոմեր խելքին չէ:

— Լսիր, — ասում եմ, — թող աշխատեմ, ես խնձոր շեմ սիրում՝ բնական խնձոր լինի, թե քիմիական, չեմ սիրում: Գործերդ ո՞նց են:

— Գու հասկանո՞ւմ ես, — նա խնձորները մեկիկ-մեկիկ դուրս է նետում իմ պատուհանից, — ասենք, դու ի՞նչ պիտի հասկանաս: Եթե այսպես գնա՞ իմ տղան և քո տղան ձոր հնախագծելու, արհեստական լուներ են կառուցելու:

Եվ հանկարծ.

— Զեր գյուղի թթենին կա՞:

— Կարել են: Տունը ծախել էինք, չէ՞ որ կարել են: Իրենց թթենին էր:

— Քո թթենին էր, — հանկարծ գոռում է Վարուժանը, — մեր մանկության թթենին էր, պապիդ թթենին էր:

Պապի՞ս ինչու հիշեց:

Պապս մեռել էր այդ թթենու տակ: Մայրս է պատմել՝ մի օր, այդիներից հոգնած ու քրտնած եկել է տուն, նստել է

զետնին, թիկն տվել թթենուն և մինչ տասս թեյ է բերել, պապս վերացել-գնացել է ուրիշ մի աշխարհ, որտեղ քրանելն արդեն վնաս չէ, որտեղ մուգ թեյն արգեն օգուտ չէ, որտեղ երկնքի միակ ամպերը ծառերի սպիտակ արմատներն են:

— Հետո նաև թթենի են նախագծելու, նաև փշատենի, — գոռում է ընկերս, — փշատը, գիտե՞ս, ինչ հրաշք է:

Ես ծիծաղում եմ: Վարուժանի հոռետեսական երեակայությունը սահման չունի. երեկի դարձալ գնացել է որդուն տեսության՝ մորական տատուպապը թուլլ շեն տվել, ասել են «նրա քնելու ժամն է», «Հիմա նա նվազում է»: Կամ նման մի բան:

— Արթուրին երկու օր առաջ ցույց տվին, թավշութակ էր նվազում: Լավ էր նվազում: Մեծացել է:

Վարուժանի աշքերը կենտրոնանում են մի կետի, նա մի տեսակ խեղճանում է, հետո ասում:

— Ամեն անգամ որոշում եմ հեռուստացույց առնել, բայց ես ե՞րբ եմ տանը լինում: Գրպանի հեռուստացույց էլ չկա:

— Կլինի, — ասում եմ ես, — այ, հրաշքը դա կլինի:

— Հրաշքը փշատն է, — իր հոռետեսությանն է վերադառնում ընկերու, — հրաշքը փշատն է և պապիդ թթենին:

Նա մի ամբողջ գլանակ ծուխ է ներս քաշում ու կատաղությամբ նայում իմ սենյակի լայն, մետաղյա պատուհանին:

— Այ դու, ոչ մի պապ չես տեսել, քեզ նրանց մասին միայն պատմել են, բայց դու պապ ունես, հաստատ ունես: Իսկ որդուս պապը, այսինքն, իմ հայրն ապրում է նույն քաղաքում, երկու փողոց այն կողմ, իսկ տղաս պապ չունի: Հեծանիվ ունի, զգեստներ, ինչ ուզես ունի, երեք բնակարան ունի, պապ չունի:

— Հո շե՞ս իմել, — հարցնում եմ:

Ընկերս նայում է խորտակված աշքերով, դանդաղ վեր է կենում, գնում դեպի դուռը:

— Քեզ մոտ ես գալիս եմ, երբ որ ոչ մի տեղ չեմ ունենում գնալու, խմած լինում եմ մնացած օրերին...

Ես մի կերպ նրան վերագրածնում եմ աթոռին: Ինչո՞վ շեղեմ սրա տրամադրությունը:

— Դու պատերացնո՞ւմ ես, որ փայտից թնդանոթ սարքենք, իսկական թնդանոթ, — ասում եմ ես, — թնդանոթ, որ կրակի.. Հրաշք ժե՞...

— Փայտից քո զլուխն են սարքել: Փայտի ուրիշ հրաշք չփիտեմ: Գլուխդ էլ չի կրակում:

— Փայտից թնդանոթ, այս: — Ես նրա վիրավորանքը կուլ իմ տալիս: — Դա եղել է Արարատյան գաշտի զյուղերից մեկում, հասկանո՞ւմ ես, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Գիտի այն կողմում թուրքերն էին և կամաց կամաց սեղմում էին օղակը: Թե ում գաղափարն է լինում, անհայտ է, հինգ-վեց օրում, գիշեր-ցերեկ տքնելով, սարքում են այդ փայտի թնդանոթը: Սրբն ինչից են սարքում, չգիտեմ: Կրակում են լուսնյակ գիշերով: Մաքուր լուսթյան մեջ աշուլի է թվում պայտյունը, և ծովալ երկար մնում է օդի մեջ: Թնդանոթը պարզ է, ցրիվ է գալիս, բայց թուրքերը սարսափած փախչում են: Հրաշք չէ՞...

— Պապդ այդպիսի թնդանոթ կապրեր, — ասում է ընկերս, — պապդ ուրիշ մարդ էր: Պապդ ինքը թնդանոթ էր, որությունը էր կրակում:

Նա ի՞նչ եմ ճանաշում պապիս:

Ես ի՞նչ եմ ճանաշում պապիս:

— Գյուղ զնանք, — ասում եմ ես, — մի քիչ կթափառենք ձորում, վեր կընկնենք չորացած տերևներին: Խոստացիր միայն, որ ձորում լուս կմնաս, մանավանդ գլուխս շեն տանի, թե քանի տարի հետո մեր որդիներն արհեստական ձոր են նախագծելու:

— Գնանք, տեսնենք ձեր թթենին, — ասում է:

— Թթենին կտրել են, լսեցի՞ր...

— Աշխատանքդ ե՞րբ է վերջանում:

— Ժամուկիս-երկու ժամ կա:

— Ես կգամ հինգին, երեկի Արթուրին տված կլինեն, Արմենին էլ վերցրու, շրոսով զնանք զյուղ:

Արմենն իմ տղան է: Զորս տարին նոր է լրացել: Կուրախանաւ:

— Լավ, — ասում եմ, — կապասեմ:

Ամենից առաջ գնում ենք ձոր, տղաս է ուզում, դրա համար Վարուժանը զիջում է: Զորում ուշ աշուն է, գիտում բավական զուր կա, ձորը լցված է զնուցով, որ ամենալավ լուսթյունն է: Ես պատկում եմ շորացած տերևների հաստ, կախարդական ներքնակին: Վերմակը երկինքն է: Արմենը շրափուի մեջ մի պատիկ գորտ է տեսել, սսկվել, պլշած նայում է: Վարուժանը գնացել է զրին մոտիկ, ինչ-որ բան է պատմում, ցույց տալիս Արթուրին: Արթուրը ինը-տասը տարեկան տղա է, գեղեցիկ, շատ կող հագնված:

— Արի քեզ տանեմ մեր տուն, քույրիկիս վախեցնեմ, Հա՞,—  
այդ Արմենն է համոզում գորտին,— ուզո՞ւմ ես քեզ կտանեմ  
մանկապարտեղ, դու... փոքրիրի խմբում լիինես, ես՝ մեծերի:  
Ես մեծ եմ:

Գորտը պլշած նայում է:

— Վաղը որ եկել էինք, գորտը էլի էստեղ էր, ես տեսել  
եմ, — ժամանակի միակ միավորը Արմենի համար վաղն է, իսկ  
ձոր մենք եկել էինք մի ամիս առաջ:

— Ինքն էր, — ասում եմ ես, — ես էլ եմ հիշում:

Արմենն անշշուկ մոտենում է գորտին, երկի ուզում է բռնել:

— Ֆու, — հանկարծ լսում եմ իմ զլխավերեում. Արթուրն  
է, — ձեռք շտաս, Արմեն, ֆու...

Գորտը փախչում-կորչում է տերեների մեջ, Արմենը լացա-  
կումած նայում է ինձ:

— Ֆուն դու ես, — խռոված ասում է Արմենը, — ինչո՞ւ  
փախցրեցիր...

— Քեռի, դուք իրեն բացատրեք, — Արթուրն ինձ է դիմում, —  
բացատրեք, որ չի կարելի գորտին ձեռք տալ, մաքուր չի:

— Ինչո՞ւ, — հարցնում եմ, — գորտը այս ջրերում է ապ-  
րում, տես ինչ մաքուր, պարզ ջուր է:

— Պապիկս է ասում:

Ես հետև հաց ու պանիր, միրդ եմ վերցրել, պայուսակից  
հանում-շարում եմ չորացած տերեների սեղանին. Արմենը  
նստում է մի քարի, վարուժանը փովում է գետնին. Արթուրը  
չի նստում, նա կանգնած է՝ կոկիկ, արգուկված, մաքուր:

— Քարը սառն է, — ասում է նա, — իսկ հողը կեղտոտ է:

— Հողը չի կարող կեղտոտ լինել, — գոռում է Վարուժանը: —  
Ուզում եմ լաց լինել, — դա արդեն ինձ է ասում:

— Իմիր մի բաժակ, — գարեջուր եմ տալիս:

— Ինձ էլ, — ձեռքը մեկնում է Արմենը:

— Մի կում, լա՞վ...

— Լավ, — ասում է Արմենը, բայց չի խմում իմ բաժակից,  
նա ուզում է առանձին բաժակ, ես լցնում եմ: — Ձորի կենա-  
ցը, — ասում է, — գորտի կենացը, բարի կենացը: — Ու խմում  
է իր մի պուտ գարեջուրը, ուրախ ծպացնելով: Արթուրը  
զարմացած նայում է Արմենին, նայում է ինձ: Նա մի կերպ  
նստել է. հայրը մի ինչ-որ փայտ գտավ, ուրիշ բան չկար, իր

դիխարկը դրեց, որ Արթուրը չմըսի: Ես ինձոր եմ մեկնում  
նրան:

— Մաքրիր, — տալիս է նա հորը:

— Դանակ չկա, — ատամների պարնքից նետում է Վարու-  
ժանը, — այդպես կրծիր, տատ շի տեսնում:

Մենք ձորից բարձրանում ենք կարճ ճանապարհով: Այդ ճա-  
նապարհով երեխա ժամանակ մենք ձոր էինք իջնում լողանա-  
լու: Ես այդպես էլ կարգին լողալ չսովորեցի: Մի անգամ քիչ  
մնաց խեղզվեի, և զրանից հիտո սարսափելի վախենում էի,  
խոր տեղ չէի մտնում, հենց կուրծք ծածկում էր, ետ էի դառ-  
նում: Իսկ լողը երևի վախի հաղթահարումն է. դու պիտի քեզ  
ձուկ զգաս, գորտ զգաս, հրճվես ջրով: Իսկ ես ջրից վախենում  
էի: Ինչևէ:

Ձորը մնում է ներքենում, մենք արգեն դյուղում ենք, քիչ հե-  
տո երևում է մեր տունը:

— Պապիկի տունը, — ուրախ ճշում է Արմենը:

Ես նրան միշտ ցույց հմ տալիս մեր տունը, բայց ասում եմ,  
որ դա պապիկի տունն է, որ հեռու, շատ հեռու տեղ է գնացել:  
Երբ որ գա, կմտնենք բակի:

— Մտնենք բակ, — ասում է Վարուժանը:

— Զե՞ս ա տեսնում, թթենին կտրել են. էլ ինչ մտնենք:

— Դնանք երևան, — ասում է Արթուրը, — ես մի ժամից պի-  
տի հյուր գնամ:

— Սա ի՞նչ թթենի է, — հանկարծ պայծառանում է Վարու-  
ժանը:

— Թթենի է, շատ սովորական թթենի, — շոր ասում եմ ես:

— Սա շկար, սա ձեր թթենու արմատից է դուրս եկել, պա-  
պիդ թթենուց: Սա շկար:

Ես նայում եմ Վարուժանի հայտնաբերած թթենոն, մեր  
ծառից բավկան հեռու է և բակի մեջ չի, ծակել է ցանկապատը,  
դուրս եկել փողոցի կողմից: Զահել, շատ զահել ծառ է:

— Երևակայությունդ կրծատիր, — ասում եմ, — զնանք:

Ես հանկարծ տիրում եմ, որովհետեւ ակացներիս մեջ արթ-  
նանում է մեր թթենու խշոցը, օդի մեջ տեսնում եմ նրա  
ճյուղերը, որ հասնում էին մեր տան կտուրին: Ես այդ ճյու-  
ղերով էի կտուրը բարձրանում: Ես հանկարծ՝ որպես ուրիշ  
ձայն, լսում եմ մանկական օրերի իմ սեփական ձայնը, որով-  
հետեւ թթենու վրա, ճյուղերի մեջ ես ինձ համար տնակ էի

սարքել, ցերեկը բարձրանում էի, այնտեղից ոտանավորնեռ կարդում ներքեռում հավաքված ընկերներին համար: Մեր տան տանիքը Հիմա թիթեղապատ է, իսկ թիթենին չկա:

— Զեր թիթենու արմատից է, — պնդում է Վարուժանը, — որ ասֆալտը քանդենք, կհամոզվես:

— Ուշ է, — տառմ եմ, — ասֆալտը քանդելու համար այսօր ուշ է: Առջասարակ ուշ է:

Մեր գյուղի հին փողոցը, որի ասֆալտի տակ իմ մանկության ոտնաձայներն են, լիբն է մեքենաներով, մարդկանցով: Մեր թիթենու ստվերի կեսը ընկնում էր փողոցի վրա, ևս շատ անգամ էի փորձում կավիճով գծել այդ ստվերի սահմանները, չեր հաջողվամ, որովհետև ստվերը անընդհատ փոխվում էր: Ինձ այդպես էլ շհաջողվեց նկարել այդ ստվերը փողոցի վրա: Հիմա փողոցի վրա ստվերը չի ընկնում:

## ԽՄ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՐԵԲԸ

Ես էնրիկո Կարուզո շդարձա՝ ինչպես ուղում էին և համոզված էին մեր գյուղի տղաները, որոնց համար երգում էի մեր մանկության մուգ գիշերներին: Ուսուցիչ էլ շդարձա՝ ինչպես մայրս էր երազում, «ուսուցի» փոխարեն «վարժապետ» լիբը, հին ու իմաստուն բարը գործածելով, նա երազել էր, որ հայրս դառնա գյուղի ուսուցիչը, իսկ հայրս Ալեքսանդրապոլի քաղաքային ուսումնարանն ավարտելուց հետո վերադարձել էր իր այդիներին: Չդարձա նաև նկարիչ, ինչպես ես էի համոզված, որովհետև շորս-հինգ տարեկանից սկսած նկարում էի մեր տան, հետո գյուղի բոլոր սպիտակ պատերին, թղթերի, կտավների վրա, մատիտով, կավիճով, ածուխով: Դարձա շարքային, շարքային նախագծող (ամաշում ևմ գործածել ճարտարապետ զնուոն բառը), որ շարքային, իրար նման շենքեր է գծմծում: Կիս ինձ համարում է ճախորդ մարդ, տղաս իմ ազգանունով հպարտանալու ոչ մի պատճառ չի ունենալու, իսկ տիսրության, մենակության պահերին ես սիրում եմ արթնացնել իմ մանկության ձայները: Զայնե՞րը... ես նրանց դիմում եմ իրեւ կենդանի, ապրող արարածների և ձայները ևնթարկվում են ինձ: Արթնացեք, հրում եմ նրանց, — ձայներին եմ հրում, — լցորեք իմ ներսը շարժումով և մաքրությամբ, մի՛ թողեք, որ ծերանամ: Եվ մանկության ձայները ևնթարկվում են ինձ՝ արթնանում են:

\* \* \*

— Ոսկե ժամացույց տեսէ՞լ ես, — տարիների մուժից լսում եմ նորիկի ձայնը:

— Մեր դպրոցի ժամացույցը շզիտեմ ինչից է: Ոսկո՞ւց է:

— Դմբո, — լսում եմ նորիկի քրթիչը, — եթե ոսկուց լիներ, դիտե՞ս քանի կիլո ոսկի կգնար...

— ...իսկ քանի՞...

— Շատ... հաւ լսիր, թե ոնց է աշխատում, — և նա ականջիս է մոտեցնում իր ձախ դաստակը: — Ոնց որ... սիրու:

Նորը, անլսելի աշխատում է ժամացույցը՝ ասես սարյակ է ծրվում: Հետո նորիկը թուլլ է տալիս, որ մանրամասն նայեմ սլաքները, թվանշանները:

— Քեռիս է բերել Գերմանիայից, մաքուր ոսկուց է: Նայիր ես այն ժամանակ շդիտեմ ինչ է մաքուր ոսկին, իսկ մեր մեջ սսած, ավելի կուղենացի տեսնել մաքուր ցորեն: «Կոփիլը վերջանա, — երազում էր մայրս, — փող ունենանք, եղվարդից մի տասը փութ մաքուր ցորեն բերեմ, տանեմ աղամ, մաքուր ալյուր լինի, ոչ մի բան շնառնեմ հետը, թիւմ՝ երեխերն ուտեն Մաքուր գալգալոս ցորեն»:

Նա ժամացույցը հանդիսավոր հանում-մեկնում է ինձ:

— Զգցես, — ասում է, — մի թեթև հուզ առւր, կրացվի:

Թեթև սեղմում եմ: Ինչ-որ բան է ընկնում կափարիշի տակից: Վաշ, Մանուշի նկարը: Մեր հարման Մանուշի. փոքր, շատ փոքր նկար է, պլշած դիտում եմ նկարը՝ փոխանակ նայեմ ժամացույցին, որ մաքուր ոսկուց է:

— Մթնեց թե չէ համերգ ունենք, պուճուր ախպեր, — ասում է նորիկը: — Երգելու ենք, ո՞նց ենք զիելու...

Երգելու ենք. կարծիս ինքն էլ է հետո երգելու: Բազաձա՞յն: Ես եմ տնկվում Մանուշենց պատուհանի տակ, Մանուշենց տունը երկարկանի է, իսկ իրենք շորս քույր են, տնկվում եմ, երկարացնում վիզու, ձենս զցում զլուխս, իսկ ինքը նստում է քարին, զլուխն է տմբամբացնում: Երբ մեկը վերջացնում եմ, ասում է, թե էլի որը երգեմ:

Ես երկի լավ եմ երգում, որովհետև հո մենակ նորիկը չէ, մեր գյուղի մեծ տղաները ինձ մի գլուխ երգացնում են: Ախ, եթե նվազել էլ իմանայի: Երկու օրում կոսկորեմ... Անցյալ տարի մի մարդ թառ էր ծախում... Հինգ-վեց հատ ուներ:

Չատերազմը դեռ չէր վերջացել, իսկ սա արդեն թառ էր ծառում: «Ա՛ռ ինձ համար,— լաց եղա տանը,— ուզում եմ, ա՛ռ»: Մայրս տխուր-տխուր փողոց ելավ, և՝ հետեւ, մոտեցավ մարդուն, ինչոր բան հարցրեց, հետո ավելի տխուր-տխուր ետ դարձավ: «Ութ կիլո ցորենի գին է ուզում,— ասաց,— ութ կիլո մաքուր ցորեն որ ունենանք, կադանք կարտոլի հետ, կդառնա տասնհինդ կիլո մարդավարի հաց»:

Այսպես եղավ, որ թառ շառանք, ևս մնացի իմ ձայնալարերի հոյսսին, իսկ ձայնալարերը ձրի են, ուրեմն ցորենի հետ փոխել չել լինի: Ես հանկարծ իմ այդ շունեցած, շնվազած թառի ձայնն եմ լսում մանկությանս դատարկ, ամայի փողոցներից...

— Արամին եմ խոսք տվել,— ասում եմ նորիկին,— կանաչ աշբերով Սեդայի համար եմ երգիրու:

— Ժամացույցս տուր, — նորիկը նեղանում է: Նորիկը 16—17 տարեկան է, ինձնից շորս-հինգ տարով մեծ, բայց նեղանում է շորս-հինգ տարեկանի պիս, — իմը առաջին ժամացույցն է մեր զյուղում, մաքուր ոսկուց: Մանուշին կասիս:

— Ինչո՞ւ, — զարմանում եմ ես:

— Կմեծանաս՝ կիմանաս:

Մեծացա և գնալով ավելի հաճախ եմ փորձում ետ պտտել իմ ապրած օրերի ժապավենը, որ հետո մատս սեղմեմ հուշերիս կոճակին, և ժապավենը խոսի, երգի, լաց լինի, և լսեմ այն անցած-մոռացված օրերի ոտնաձայները:

Ետպատերազմյան առաջին աշունն էր, և երբ տուն վերաբարձան նրանք, որ պիտի վերադառնային, նոր-նոր իսկականից հայտնի դարձավ, թե մեր զյուղը քանի հորով է պակասել, քանի եղբորով, քանի ջահել՝ պասկվելու պատրաստ տղայով: Պատերազմի ժամանակ զյուղում ավելի քիչ տղամարդ կար, ճիշտ է, բայց ով չգիտեր, որ նրանք ուրիշ տեղ են, կովում են և, ուրիմն, ժամանակավոր են բացակա, կգանկլրացնեն իրենց դատարկ տեղերը: Դատարկ շատ մնացին, որովհետեւ տուն դարձան ով ողջ էր մնացել, և զյուղում հանկարծ պարզ-պարզ երևաց, որ աղջիկները շատացան: Առ պիտի սիրեր նրանց, ո՞վ պիտի պասկվեր նրանց հետ:

— Քանիսի՞ն պիտի զնաք Արամի հետ:

— Եսիմ: Հենց որ մութը ընկնի:

— Հետո ես քեզ կդառնամ Սեդայինց տան կողմերում:

— Տնայինս շիմ գրել, — ասում եմ, — մի հատ էլ անդիբ պիտի սովորեմ:

— Մի երգ կերպես, շիս մեռնի:

Նորիկը զղային լուսմ է, հետո հանկարծ անսպասելի խեղանում: Իսկ նա մեր զուուի ամենաուժեղ տղան է, Մանուշին էլ՝ ամենասպասար աղջիկը:

— Մի բան ասա, զնամ ասեմ Մանուշին, — ելքը գտնում եմ ես, — ես երբ ուզեմ, Մանուշին կտեսնեմ: Ուզում ես, նամակ տուր: Ուզո՞ւմ ես, հիմա էլ զնամ իրենց տուն:

— Ասա իրիկունք գա կինո, նստի վերջին կարգում, կողքի տեղը ազատ թողնի: Հենց լույսերը հանգցնեն՝ կծեմ կողքին: Հաշվիր ասած:

...Մանուշին ես վերջերս տեսա, Արովյան փողոցի հաշնութում: Նա այդպես էլ շամունացավ, նրա քուրերից երեքը շամունացան, միայն փոքրը՝ Գայանեն, ամուսնացագրաժանվեց երեք անգամ: Մանուշը ինձ շճանաշեց, թեպիտ ես երկար-երկար նայեցի նրա սպիտակ, հացի պես փափուկ դեմքին, որովհետեւ աշքերը լավ չեին երևում մանուշակագույն ակնցի տակից:

...Իսկ այն օրը, տարիներ առաջ, երբ նրան հայտնեցի նորիկի սովի ժամացույցի, իր պստիկ, լրնազ նկարի մասին, որ հիմա ոսկու մեջ է մնում, նա քթի տակ ժպտաց ու ականջաքաշեց. «Լավ էլ ընկեր ես գտել», — ասաց: Նրա մատները բարակ էին, տաք, եղունգները երկար ու փայլուն: Հետո, երբ հալտնեցի, որ նորիկը կսպասի կինոյում ու երբ մութն ընկնի, կծելի նրա կողքին (այդպիս էլ ասացին կծելի), նա նախ ծիծաղեց՝ «Հորի՞ է, որ ծլի», հետո զղայնացավ. «Դու փոքր տղա ես, Հո Հեծանիվ-Արմոն շե՞ս»: Հեծանիվ-Արմոն մեր զյուղի փուտատարն էր՝ նա ուներ մեր զյուղի միակ երկուակնանի հեծանիվը «Հեծանիվ լի, այլ թուզող գորգ», — ասում էր նա: Բայց Հեծանիվ-Արմոնի մի ոտքը կաղ էր, մի աշքը՝ փուլ, իսկ մայրս ասում էր. «Մեր զյուղի բամբասանքը էղ ակներով է զնում-գալիս»: Ես նեղացա Մանուշից. «Ես խարաբրզիկ շեմ, իսկ նորիկը մի արեսու օր կմեռնի քեզ համար: Ինքն է ինձ ասել, հորս արե, իսկ հիմա լիքը արեսու օրեր են»: Մանուշը փափկեց, մեղմացավ, հետո հանկարծ մոտ քաշեց ինձ, ամուր-ամուր կպցրեց իրեն, ու ես մոտիկ, շատ մոտիկ զգացի ջահել աղջկա զարմանալի բույրը, նրա կրծքերի պիրկ փափկու-

թյունը: Շշմելու բան էր: Հեքիաթ: Հետո նա պինդ համբուրեց թուշ: «Դնա,— ասաց,— լզիտի», որ մայրս մեզ կինո չի թողնում»:

Հետո, տարիներ հետո միայն ես հասկացա, որ Մանուշը, մեր գյուղի մյուս աղջիկները, երբ ինձ գրկում-համբուրում էին, իրենց տղաներին էին գրկում-համբուրում, ինձ ասում էին այն բառերը, որ մենակության պահե՛ն գտնում էին իրենց տղաների համար և, ափսոս, այդ բառերը ես կորցնում էի հենց ճանապարհին, որովհետև մտածում էի, թե իմն են այդ բառերը: Իսկ ինչ քոնն է, կորցնում ես: Այդ բառերը, այդ համբուրուները ես պիտի հիշեի, պահեի, պահպանեի ու անվնաս փոխանցեի նրանց՝ իմ ավագ ընկերներին, որոնք ինձ մասնակից էին դարձնում իրենց առաջին, ամենաառաջին սիրուն, շիմանաւով, որ, ախր, իրենց աղջիկները դառնում են նաև իմ առաջին սերեր...

Տիուր, երանելի, արդար ժամանակներ էին մեր հոգիների համար, իսկ մի բանի օր առաջ՝ Արբովյան փողոցի հացի խանութում ես հանդիպեցի Մանուշին: Հաստացած, փափկած, բայց գեռնա օրիորդ՝ Մանուշը հացն ընտրում էր մանրակրկիտւարված, հետո վաճառողին կտրել տվեց, կես հացը դրեց պայուսակի մեջ, հետո դանդաղ-դանդաղ ներծծվեց մայթի ժխորի մեջ: Իսկ նորիկը հիմա շորս երեխա ունի՝ հենց նույն այն կանաչ աշբերով Սեղայից, որի տան պատի տակ այն գիշեր, տարիներ առաջ, ես երգեցի ոչ նրա, այլ Արամի համար: Իմ երգերը նամակ էին, հեռախոս, հեռագիր: Կարոտ էին, սպասում, կատաղություն և հույս:

\* \* \*

...իսկ մի գիշեր ես երգեցի իմ իմացած ամենատխուր երգերը: Արևիկի հարսանիքն էր, նրան պսակում էին բանակից նոր տուն դարձած օշականցի մի լեյտենանտի հետ, թեսկետ ողջ գյուղը գիտեր, որ նրան գժի պես սիրում էր Սև-Սահակը: Թանի անգամ ես երգել էի նրանց պատուհանի տակ, մի անգամ Արևիկը նույնիսկ իմ ձեռքով նամակ ուղարկեց Սև-Սահակին, բայց, ահա, վեր է կենում ու հարս է զնում... Օշական... Արևիկի հարսանիքը պատերազմից հետո առաջինն էր մեր գյուղում, խեղճ, տխուր մի հարսանիք. նրա եղբայրը զոհվել

էր 41-ին, հայրը տուն էր եկել միտանի, իսկ օշականցի լեյտենանտը, որ երկու մեղալ ուներ, ահազին շորեր, ամանեղն, նույնիսկ ասում էին դաշնամուր էր բերել պատերազմից:

Հարսանիքն անելու համար Արևիկենք իրենց տուն էին հավաքել թաղի բոլոր լամպերը, բոլոր ունեցած-շունեցած բաժաները, ամանները, պատառաքաղները: Նվազ, պարզ է, որ շկար, մանավանդ որ գուռ-դռան հարեւուուին՝ Ասաննեթը, պատերազմում կորցրել էր ամուսնուն ու տղային, մնացել էր մեն-մենակ ու ամբողջ օրը գուան քարին նստած վշշում էր ու մանր քարեր՝ զցում առվի մեջ: Նվազ շկար, ևս բարձր, որ քան ձայն ունեի, զուգմած ու սխալ՝ երգում էի «Սիրեցի, յարս տարա՞ն», երգում էի արդեն երրորդ անգամ, իսկ Սև-Սահակը թիկնեղ, բարի և ուժեղ Սև-Սահակը՝ խաչքարի պես թերված պատին, խուլ մանշում էր:

— Արևիկին տանում են,— երգու բնդշատելով կամաց բոթեցի Սև-Սահակին, որովհետև տան գուրը բացվեց, հետո բակի դուրը և ահազին մարդ գուրս եկավ:

Սև-Սահակը ինչ-որ բան մոնշաց, բայց շշրջվեց տան կողմը, այլ ասաց. «Երգիր, ինձ թաղիս, թի շերգիս»:

Սիրեցի, յարս տարան,  
Յարս ավին ու տարան...

Իմ ձայնը զիլ զնգաց մութ զիշերի դատարկության մեջ, տնից գուրս եկողները շուրջները նայեցին, ես նրանց մեջ հեշտությամբ գտա օշականցի լեյտենատխին, որովհետև մութ էր և լավ պլայում էին նրա զույգ մեղալները: Ուրեմն, նրա կողքին կուշարածը Արևիկն էր և, ուրեմն, իսկապես՝ չես ինչ զուլում աշխարհ է...»: Ես երգում էի, մոտիկ բակից կաղկանձում, ասես ինձ էր ձայնակցում տխուր մի շուն, իսկ արցունքներս հազիվ էի զսպում. չէ՞ որ Արևիկը նաև իմ առաջին սերն էր...

— ...Սև-Սահակը հիմա բենջին է ծախում մեր գյուղի ճանապարհին և մի անգամ, երկու տարի առաջ էր, շարախնդությամբ ասաց, որ Արևիկի մարդուն՝ օշականցի նախկին լեյտենանտին, որ պատերազմից հետո զիտեմ ինչ էր անում, ութ տարի են տվել՝ շգիտեմ ինչի համար: «Տասն էլ կարելի էր տալ», — ասաց Սև-Սահակը ու ծխեց, մի ամբողջ գլանակի ծովի միանգամից, ամբողջովին ներս քաշեց:

...նուկ մի զիշեր գնացինք Ամբերդ:

Դյուզի կենտրոնում, մեր դպրոցի առաջ աղբյուր-ջուշարձան էին կառուցել զո՞վածների հիշատակին, ցերեկը բացումը եղավ, աղամարդիկ խմեցին՝ վլատից կամ ուրախությունից, կանաչը լայ եղան, իսկ ջա՞նելներին թուլ տվին՝ ինչ ուզում եք արեք:

Ջաճելները որոշեցին ոտքով գնալ Ամբերդ:

Ինձ էլ տարան:

Աստղերի լույսով էինք գնում: Տասը-տասնմեկ տղա էր, մի յոթ-ութ աղջիկ, իսկ վերջում գնում էր Սև-Սա՞ակենց էշը՝ քիուված ուտելիքներով, կարպետներով, ամանեղենով: Մեկ-մեկ, երբ հոգնում էի, ինձ գնում էին էշին, բայց պաշանջում էին, որ երգեմ: Այդ զիշերվա իմ երգը, ուրեմն, էշ նստելու գինն էր:

Ամբերդ հասանք, եկեղեցին ու բերդը երևում էին իբրև խավար զանգված, մուգ կապույտով նկարած ինչ-որ առասպելական հսկաներ, իսկ երբ երկնքում զարթնեցին բոլոր աստղերը, ինձ թվաց հեթափի մեջ ենք:

Աղջիկները կարպետը փռեցին, տղաները սկսեցին փայտ հավաքել խարույկի համար, ևս նստել մտախոչ նայում էի երկնքին. աստղերն ո՞ւր են գնում ցերեկը, բանի՝ պատերազմ է տեսել լուսինը, ի՞նչ կլիներ, եթե հանկարծ Ամբերդում զո՞ված հայ զինվորները վեր կենալին ու գալին, մեզ հետ խարույկ անեին, սեղան նստեին... «Հովիկ, — հանկարծ լսեցի անունս, Մարիամիկն էր, — Հովիկ ջան, էս մոմք վերցրու, հետո արի, ընկա առուն, թրջվեցի», Մարիամիկը, իրոք, ոտից գլուխ թրջված էր, սրբարթում էր: «Գնանք, — ասացի, — ևս հետզ հմ, մի վախենաա:

Եկեղեցու զավիթը մութ էր, ձախ ու աչ՝ նեղիկ խցեր էին, պատր քանդված էր, բայց ոշինչ: «Ես ներս կմանեմ, — ասաց Մարիամիկը, — գու մոմք կպցրու պատին, գնա»:

«Ես պատի մյուս կողմում կանգնեմ, — ասացի, — կշվալացնեմ, կամ, ուզո՞ւմ ես, ցածր ձայնով կերպիմ: Ո՞րը...»: «Պատուհանիդ տակին կանգնած, — սրբարթալով կմկմաց Մարիամիկը, — բայց շատ ցածր, մարդ լսի...»: Ես մոմք կպցրի քարին ու անցա պատի մյուս կողմը: Պատը բավական քանդված էր, ու ես բացվածի միջով ձեռս մեկնեցի նրան.

«Այստեղ եմ, շվախենաս»: Մարիամիկը թուլ ժպտաց. «Մի նայիր, Հովիկ, երգիր»: Ես նստեցի կանաչին ու մեղմ, աստղերի շշուկի չափ մեղմ՝ սկսեցի երգել: Ինչ-որ սոնաձայն լսեցի Հրայրն էր. «Ի՞նչ ես անում»: «Մարիամիկը ներսում է, շորերն է փոխում»:

Հրայրը մոտեցավ բացվածքին, ևս էլ վեր կացա, սեղմվեցի նրան: Հրայրի համար էլ ես շատ անգամ երգել եմ Մարիամիկենց տան առաջ: Ու ամեն անգամ, երբ երգում-վերջացնում էի, Մարիամիկն ասում էր. «Ապրես, Հովիկ ջան, տուն գնա»: Ինձ էր ասում, կարծես թե Հրայրը չկար կողքիս... Բացվածքից ես տեսնում էի Մարիամիկին. նա արդեն հանել էր իր ծիրանագույն շորը. մզում էր, որ չորանա: Հետո շորը փոեց քարին և հանեց շապիկը, մոմի լո՞ւզը շատացավ... «Չմրսի», — շշնչացի ես Հրայրի ականջին, իսկ նա, զիտեմ ինչու, ձեռքի ափով փակեց բերանս: Հրայրի ձեռքը թեթևակի դողում էր: «Դո՞ւ էլ ես մրսում, Հրայր»: «Էշ, — շշնչաց Հրայրը ականջին մեջ, — Հարյուր տոկոսանոց էշ»:

Մարիամիկը շապիկից հետո հանել էր մնացած և մոմի լույսի մեջ կանգնած էր բոլորովին մերկ: «Ինչ բարակ մեջք ունի», — շշնչացի ես Հրայրին, իսկ նա ավելի էր գողում և լպատասիանեց: Մարիամիկը թաց մազերը ետ տարավ կրծքից, հետո ձեռքերով մի անգամ շոյեց ստինբերը: Նա կարծես հրճվում էր ինքն իրենով: Այդպես ես մի անգամ, մեծ քրոջ էի տեսել լողանալիս, բայց քրոջ նայելը ինձ համար ուզզակի հետաքրքիր էր, իսկ այստեղ հանկարծ անսովոր սարսուռ զգացի: Ի՞նչ զեղեցիկ էր Մարիամիկը եկեղեցու մութի մեջ, մոմի բարակ լույսը մետաքսի բողի պես զցած ուսերին:

«Դու մի նայիր, — հանկարծ զգացի, որ Հրայրը հրում է ինձ, — դու էլ ես տղա, դու մի նայիր»: Մեկ էլ լսեցի Մարիամիկի ձայնը. «Հովիկ, որտե՞ղ ես, ինչո՞ւ չես երգում»: «Երգիր, — շշնչաց Հրայրը, զլուխը պատի բացվածքից փախցնելով, — ինձ թաղես, թե չերգես»: Այդ պահին ես առանձնապես դեմ չէի մի քանի բոպեռվ Հրայրին թաղել, բայց Մարիամիկն էր ձայն տալիս ինձ, ու ես երգեցի:

Պատուհանիդ տակին կանգնած  
Կեռ զիշեր է, ձա՞ն չկա,  
Իսկ զա հանգստ բնով արքած...

...Ես Հետո, աւարիներ հետո միայն հասկացա, թէ ինչու ինձ Հրեց Հրայրը, ինչու շուղեց, որ ես էլ նայեի Մարիամիկին Բայց ախր Մարիամիկը նաև իմ առաջին սերն էր: Եվ դրա համար, երբ առավոտյան, ժայռի վրա ես յուղաներկով գրում էի մեր բոլորի անունները և առաջինը՝ Մարիամիկի անունը գրեցի, և Հրայրն ասաց՝ Հիմա էլ իմը, ես Հանգիստ, չար նայեցի նրա աշքերին ու նույն գույնի յուղաներկով գրեցի իմ անուն-ապդանունը՝ Հովհիկ Համազապյան: Իսկ Հրայրի անունը գրեցի որիշ գույնի յուղաներկով՝ գրեցի ամենավերջում, Մարիամիկի անունից ամենաճիշտու:

...Տարիների սրբնթաց գնացքը գնալով ավելի ու ավելի է հեռացնում ինձ Ամքներդի այն գիշերից, որ գուցե իմ մանկության վերջին կայաններից էր... Բայց Հիմա էլ լինում են հոգու աշխատանքի բացառիկ պահեր, երբ անկարելին դառնում է հնարավոր և աշքերիս դեմ հայտնվում է նույնը՝ արդեն իբրև տեսիլք, գիշերային վանքի մուզ կապույտի մեջ, մոմի սպիտակ լույսը մետաքսի պիս պարուրած իր մաքուր արծաթի մարմնին, սանրվում է, սանրվում ու իրենով հրճվում է Մարիամիկը...



Ես երգիշ շդարձա, ուսուցիշ և իսկական ճարտարապետ շդարձա: Ոչինչ, թող կինս ինձ ձախորդ մարդ համարի, թող որդիս հոր ազգանունով հպարտանալու առանձին պատճառ չունենա: Ես ցավում եմ միայն, որ նկարիշ շդարձա: Եթե նկարիշ լինեի, կնկարեի իմ մանկության ձայները: Այս՝ ձայները՝ ձայները գույն ունեն, մարմին ունեն, ձայները տիրում են, կարոտում, ուրախանում: Իմ մանկության ձայները որդան կարմիրով արված նկարներ են, իսկ որդան կարմիրը շի մեռնում, եթե փոշի է նստել, սրբիր ու նորից կապրեն գույները, կզնդան-կաղմեն՝ ինչպես իրենց ծնունդի ժամանակ: Մարիամիկի, Մանուշակ, Արևիկ, որտեղ եք գուր, ձայն տվեք ձեր փոքրիկ Հովհիկին, որ երեսուն տարի ուշացումով ձեզ համարձակվում է խոստովանել իր սերը:

Դրական-գեղարվեստական հրատարակություն  
Պետրոսյան Վարդեն Համազասպի  
**2000 ՎԻՊԱԿ**  
Վիպակներ  
Դպրոցական միջին և բարձր տարիքի համար

Литературно-художественное издание  
Петросян Вардес Амазаспович  
**ЧЕТЫРЕ ПОВЕСТИ**  
Повести

Для среднего и старшего школьного возраста  
Художник **А. Яралян**  
(На армянском языке)  
Издательство «Аревик»  
Ереван, 1990

Խմբագրության վարիչ՝ Գ. Ս. Օնանյան, Խմբագիր՝ Ա. Գ. Յազիչյան, Նկարիչ՝  
Ա. Վ. Յառայան, Գեղ. խմբագիր՝ Խ. Զ. Հակոբյան, Տեխ. խմբագիր՝ Տ. Վ.  
Ավետյան, Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Ց. Խաչատրյան.

ИБ № 317

Հանձնված է շարլածքի 8. 02. 90 թ.: Ստորագրված է տպագրության 13. 06. 90թ.,  
Զափսը՝  $80 \times 108^1/32^2$  թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ Գրքի սով.:  
Տպագրություն բարձր, 20,58 պայմ. տպ. մամ., 18,92 հրատ. մամ.: Տպա-  
քանակ՝ 30000: Պատվեր՝ 249: Գիրը՝ 1 ռ. 40 կուգ.:  
«Արևիկ» հրատարակություն, Երևան—9, Տերյան 91:  
ՀԽՍՀ հրատարակությունների, պոլիգրաֆիալի և գրքի առևտուրի գործերի պե-  
տական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65:

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и  
книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алaverдяна, 65.